

Շար.ը՝ էջ 8

ՊԼՐՐԻԻ. «ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ ԼՐՋՈՒԹԻՒՆ ՇՕՇԱՓԱԾ ԵՆՔ, ԵՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻՋՆՈՐԴԸ ԵՐԿՈՒ ՇԱՐԱԾ ԵՏՔ ՊԻՏԻ ՎԵՐԱԴԱՌՆԱՅ ՊԷՅՐՈՒԹ»

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պլորիի երեկ հարցազրույցի մը ընթացքին յայտնեց, որ լիբանանցի պատասխանատուները սահմանափակ անուղղակի բանակցություններուն մէջ լռու ջուրին 2024-ի տարեկան ընթացքին:

Ան հաստատեց, որ Հարաւային Լիբանանի եւ Իսրայէլի միջեւ ծովային սահմանագծումի անուղղակի բանակցություններուն հսկող ամերիկացի բանագնաց Էյմըս Յոքսթայն երկու շաբաթ ետք պիտի վերադառնայ Պէյրուս՝ իրեն հետ ունենալով յստակ առաջարկ մը, «բայց եւ այնպէս լուծումներուն մասին բոլոր առաջարկները քննարկուած են արդէն», նշեց Պլորիի:

Խորհրդարանի նախագահը ընդգծեց, որ Լիբանանի իշխանութեան պետերը ամերիկացիներուն յայտնած են, որ Լիբանան կը պնդէ ծովային սահմանագծում կատարելու կարեւորութիւնը՝ իբրեւ պարտադիր անցք մը, որ կ'առաջնորդէ դէպի լուծում:

Պլորիի հաստատեց, որ ամերիկացի բանագնացը խոստացած է վերջնական ու յստակ պատասխաններով վերադառնալ երկու շաբաթ ետք:

Միւս կողմէ, «Ժափօտ» պատկերասփիւռի կայանին համաձայն, հանրապետութեան նախագահ զօր. Միշել Աուն, խորհրդարանի նախագահ Նեպիի Պլորիի եւ վարչապետ Նեժիպ Միքաթի Յոքսթայնի հետ հանդիպումին ընթացքին հաստատած են, որ Լիբանան Կանայի նախագահին ու թիւ 23 սահմանագիծը ամբողջութեամբ կը փափաքի ունենալ:

Նոյն աղբիւրին համաձայն, լիբանանցի պատասխանատուները Յոքսթայնին յայտնած են, որ եթէ յաւելեալ ժամանակի կարիք ունին բաներ յստակացնելու, ապա թող արտօսեն «Թոթալ» ընկերութեան, որ լիբանանեան ջուրերուն մէջ պեղումներու սկսի, այնպէս ինչպէս Իսրայէլ կատարած է:

«Լիբանանեան կողմը ամերիկացի բանագնացին պահանջեց արտօսել «Թոթալ»-ին, որ անմիջապէս համաձայնութեան սկսի: Միւս կողմէ, Յոքսթայն հարցուցած էր լիբանանեան կողմին, որ համաձայնութիւն չգոյանալու պարագային անոնք կրնան երաշխաւորել, թէ Իսրայէլի պիտի չգային, եւ ստացած էր պատասխան մը, որ կարելի չէ նման բան երաշխաւորել», նշած է «Ժափօտ»:

ՀՈՔՈՅԱՆ ԼԱՐԱՏԵՒ ԵՒ ՍԱՅՄԱՆԱԳԾՈՒՄԻ ԶԱՐԳՈՎ ՅԱՐԵԼԵԱԼ ՅԱՌԱՅԴԻՄՈՒԹԻՒՆ ԱՐՁԱՆԱԳՐԵԼՈՒ ԿԱՐԵԼԻՈՒԹԵԱՍՔ

Էյմըս Յոքսթայն Լիբանանի մէջ ունեցած իր հանդիպումներուն մասին հարցազրույցի մը ընթացքին յայտնեց, որ ինք լաւատես է սահմանագծումի հարցով յաւելեալ յառաջդիմութիւն արձանագրելու կարելիութեամբ: Ան յոյս յայտնեց, որ մօտիկ ապագային վերադառնալ շրջան եւ Լիբանանի ու Իսրայէլի միջեւ անուղղակի բանակցությունները հասցնէ արդիւնքի:

Յոքսթայն նշեց, որ լիբանանցի պատասխանատուներուն հետ ունեցած իր հանդիպումը որակաւ է, սակայն կայ այլ կողմ մը, որուն հետ նաեւ պետք է խորհրդակցի՝ բանակցությունները շարունակելու ծիրին մէջ:

Ան ընդգծեց, որ անցնող շաբաթներուն ընթացքին բանակցող զոյգ կողմերուն մօտ պատրաստակամութիւն եղած է բանակցությունները լուրջ տեղ առաջ-

ՄԱՀԱՁԳ

Տէր եւ տիկին Ստեփան եւ Լիլա Արթիւնեան եւ զաւակը՝ Յովիկ
Տէր եւ տիկին Վիգէն եւ Վերա Թագաճեան եւ զաւակունք՝ Սարին, Փաթիլ եւ Նաթալի
Տէր եւ տիկին Զրաչ եւ Անի Պետրեան եւ զաւակունք՝ Դալար եւ Զրակ
Տիար Յարութ Արթիւնեան եւ օրիորդ Դալար Աթէշեան
Տէր եւ տիկին Զայկ եւ Ալին Զիֆճեան եւ զաւակը՝ Միլեկ
Տիկին Սոնա Տիգփարմաքեան եւ զաւակը՝ Գեորգ
Արթիւնեան եւ Թագաճեան ընտանիքներ
Պետրեան եւ Զիֆճեան ընտանիքներ
Աթէշեան եւ Գասպարեան ընտանիքներ
Լեւոնեան եւ Դեքիմեան ընտանիքներ
Պատրիկ եւ Զանճեան ընտանիքներ
Սալիպի եւ Տիգրանեան ընտանիքներ
Տիգփարմաքեան եւ Իսկէնեան ընտանիքներ
Սալմանեան եւ Դարբինեան ընտանիքներ
Սեֆերեան ընտանիք
եւ համայն ազգականներ կը գումեն իրենց մօր, մեծ մօր, զոքանչին, քրոջ, մօրաքրոջ, քեռիկին եւ հարազատին՝

ԱՆԱՀԻՏ ԶՈՒԼՃԵԱՆԻ

(Ծնեալ՝ ՊԱՂԱՍՄԱՐԵԱՆ, 1933-ին)

մահը, որ պատահեցաւ երեքշաբթի, 2 օգոստոս 2022-ին:

Յուրաքանչեւութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ չորեքշաբթի, 3 օգոստոսին, կէսօրէ ետք ժամը 3:30-ին, Նորաշէնի Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ մէջ, ուրիշ հանգուցելի մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Զամուրի Ազգային գերեզմանատունը:

●Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ:
●Ցաւակցությունները պիտի ընդունուին թաղման արարողութենէն առաջ եւ վերջ, Ազգային առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մէջ, կէսօրէ առաջ ժամը 11:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 7:00:

Նորդիւլ եւ արդիւնքներու յանգեալ: «Արձանագրուած բացը կրցած ենք նեղեցել եւ կարգ մը յառաջդիմութիւններ արձանագրած ենք, կը մնայ, որ այդ յառաջդիմութիւնը շարունակուի, մինչեւ վերջնական լուծում», ըսաւ ան:

Յոքսթայնի կողմէ ուղղուած սպառնալիքներուն մասին հարցումի մը պատասխանելով՝ Յոքսթայն հաստատեց, որ Միացեալ Նահանգներ շատ յստակ էին իրենց կեցուածքին մէջ, երբ ընդգծեցին, թէ երկարատեւ այս տագնապին միակ լուծումը բանակցություններու միջոցով եւ դիւանագիտութեան ընդմէջէն պիտի իրականացուի:

Յոքսթայն հաստատեց, որ Նախորդ տարիներուն ընթացքին Զարիշի նախագահը հսկայ աշխատանք վկայած է առանց խոչընդոտներու՝ աւելցնելով, որ պետք է կեդրոնական այն իրականութեան վրայ, որ ինչպէս կարելի է արտօսել Իսրայէլին՝ շարունակելու իր աշխատանքը, նոյնպէս ալ պետք է արտօսել Լիբանանին՝ սկսելու իր աշխատանքը եւ մուտք գործելու ուժանիւթի շուկայ:

Յոքսթայն ընդգծեց, որ ինք քաջատեղեակ է Միշին Արեւելքի եւ Միջերկրական ծովուն շուրջ քաղաքական հարցերու մնայուն գոյութենէն, «սակայն համագումար եմ, որ կարելի է յանգիլ արդիւնքի, եւ պետք է բանակցությունները աւարտենք, որպէսզի կարելի ըլլայ համաձայնութիւն մը գոյացնել», շեշտեց ան:

Իսրայէլեան «Ուալա» կայքին համաձայն, Յոքսթայն երկուշաբթի ուշ գիշերին հասած է Թել Աւիւ, ուր ան գաղտնի հանդիպումներ ունեցած է իսրայէլացի պատասխանատուներու հետ՝ Լիբանանի հետ ծովային սահմանագծում կատարելու բանակցություններուն շրջագիծին մէջ:

Նոյն աղբիւրին համաձայն, Յոքսթայն Լիբանանի մէջ ունեցած իր խորհրդակցություններուն արդիւնքները քննարկած է իսրայէլեան բանակցող խորհուրդին եւ Իսրայէլի վարչապետ Եաիր Լապիդի հետ:

Իսրայէլեան կողմին հետ խորհրդակցություններուն մանրամասնությունները չեն բացայայտուած, իսկ Յոքսթայն վերադարձած է Միացեալ Նահանգներ:

«Ուալա» կայքին համաձայն, Յոքսթայն անմիջապէս եւ գաղտնի այցելութիւնը կը հաստատէ, որ ծովային սահմանագծումը իրականացնելու միտումներն ու ջանքերը լուրջ են:

ՊՈՒ ՍԱՄԱ. «ԿԱԶԻ ԵՒ ԿԱՅՈՒՆՈՒԹԵԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԻՔԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՏՐՈՒՄԸ ՍՈՒԹ ՍԵՆ ԵՒՅԷ ԿՈՐՍՆՑՆԵՆ ԶԱՅՆ՝ ՈՃԻՐ ԳՈՐԾԱԾ Կ'ԸԼԼԱՆԱՔ»

Խորհրդարանի նախագահ Էլիաս Պու Սաապ յայտնեց, որ ծովային սահմանագծումի իրագործումը Լիբանանի համար ոսկեայ առիթ է, «եւ եթէ կատարուի, ապա մենք յաղթանակ արձանագրած կ'ըլլանք: Սահմանագծումը այսօր պետք է կատարուի՝ վաղուցէն առաջ, որովհետեւ իւրաքանչիւր օրուան ուշացում Լիբանանի համար վնաս է: Մենք կը գտնուինք մեր բնական հարստութիւնը օգտագործելու պատմական առիթի դիմաց, մենք կարողը ունինք կազմի», ըսաւ ան:

Պու Սաապ յայտնեց, որ Նախագահ Աուն զինք նշանակած է զբաղելու սահմանագծումի հարցով՝ աւելցնելով սակայն, որ ինք այդ թղթածրարին մանրամասնություններուն մասին միշտ տեղեակ պահած է Պլորիի ու Միքաթի, եւ միշտ համակարգած է կարծիքները: «Այս է բանակցություններուն հզօր կերպով ներկայանալու ազդակը», ըսաւ ան՝ նշելով նաեւ, որ կարողացած են կատարել տեղեկություններ սպորտեղծելու փորձերը:

Պու Սաապ շեշտեց, որ ներկայիս կազմի եւ կայունութեան միջազգային կարիք կայ, եւ այդ կարիքը Լիբանանին տրուած առիթ մըն է, որ պետք չէ կորսցնելը: «Եթէ կորսնցնենք այդ առիթը՝ ոճիւր գործած կ'ըլլանք», ըսաւ ան:

Պու Սաապ ընդգծեց, որ Լիբանանի իշխանութեան երեք պետերը համախոհ են ծովային սահմանագծումի առումով՝ աւելցնելով, որ թիւ 29 սահմանագիծը բանակցային գիծ չէ, այլ՝ Լիբանանին տրամադրուած ընտրանքներէն մէկը, որուն կարելի է դիմել, եթէ համաձայնութեան մը չյանգիւք:



«ԼԻԲԱՆԱՆ ՊԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՅԻՆ ՍՈՒՐԻԱՅԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՆ ՏՈՒՆԴԱՐՁԸ՝ ԱՆԱԿԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՆ ԿԵՑՈՒՄԸՔՆԵՐԷՆ»

ՇԵՇՏԵՑ ՇԱՐԱՑԷՏՏԻՆ

Գաղթականներու հարցերու նախարարի պաշտօնակատար Իսամ Շարաֆէտտին հարցազրույցի մը ընթացքին յայտնեց, որ սուրիական իշխանութիւնները պետք է իրեն համար ճշդէն ժամադրութիւն մը, որպէսզի ամենէն մօտիկ ապագային ինք կարենայ Սուրիա մեկնիլ:

Շարաֆէտտին հաստատեց, որ տեղահանուածներու հարցերով զբաղող միջազգային խորհուրդներուն իրապարակած հաղորդագրութիւններն են, որոնք կ'ուշացուեն սուրիական իշխանութիւններուն հետ իր հանդիպումը:



«Լիբանան պիտի իրականացնէ սուրիացի տեղահանուածներուն տունդարձը՝ անկախ միջազգային խորհուրդներուն կեցուածքէն: Մենք միջազգային խորհուրդներէն գրաւոր պատասխան խնդրեցինք՝ սուրիացի տեղահանուածներու տունդարձին վերաբերող Լիբանանի առաջարկին մասին, եւ անոնք քերական պատասխանը եղաւ այն, որ Սուրիա ապահով երկիր չէ, եւ այնքան ատեն որ Սուրիոյ մէջ ապահովութիւն չկայ, ապա իրենք գրաւոր պատասխան չեն տար», ըսաւ ան:

Շար.ը՝ Էջ 8

ՆԱԽԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆԸ ՊԷՏՔ ԵՂԱԾ ԴԱՍԱԽՈՐԹՅՈՒՆԵՐԸ ՈՐԴԵԳՐԱԾ Է, ԵԹԷ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՈՐՈՇԷ ԻՐԱՆԵԱՆ ՆԱԽ ՆԵՐԱԾԵԼ

Ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարարութեան հովանիին տակ գործող Նաւթի ընդհանուր տնօրէնութիւնը պետք եղած դասաւորումները որդեգրած է, եթէ կառավարութիւնը որոշէ իրանեան նաւթ ներածել: Այս մասին յայտարարեց Նաւթի ընդհանուր տնօրէն Օրոյ Ֆալի:

Ան նշեց, որ ընդհանուր տնօրէնութիւնը կատարած է թղթածրարին

թելինք բաժինը, մինչդեռ քաղաքական բաժինը կը մնայ կառավարութեան պարտականութիւնը: «Նաւթի ընդհանուր տնօրէնութիւնը պատրաստ է իրանեան նաւթի հսկայ քանակը ներարկելու տարրալուծարանային սովորական քանութիւններուն՝ հաստատելու համար, որ անկա կը լրացնէ այն չափանիշները, որոնք հիմա վրայ կը գործէ Լիբանանի Ելէկտրականութեան ընկերութիւնը:

«Տիար» օրաթերթին համաձայն, պատասխանատու աղբիւրներ բացայայտած են, թէ այս հարցով Միացեալ Նահանգներուն ցուցաբերած «մոխրա-



գոյն» կեցուածքը կը կատարէ վարչապետ Նեժիպ Միքաթիի տալիք որոշումը, անկախ այն իրողութենէն, որ Միքաթի ոչ մէկ հետաքրքրութիւն ցուցաբերած է՝ հետապնդելու Յոքսթայնի ընդհանուր քարտուղար սեյիտ Զասան Նասրալլայի կողմէ ներկայացուած առաջարկը:

Յստակ է սակայն, որ մինչեւ ամերիկեան եւ իրանեան կողմերուն պատասխաններուն յստակացումը, իրանեան նաւթի նուիրատուութեան եւ Լիբանանի կողմէ այդ նուիրատուութիւնը ընդունելու որոշում կարելի պիտի չըլլայ կայացնել:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐԸ ԼՈՒՐԵՐ

●ԱՌԴՂՋԱՊԱՅՈՒԹԵԱՆ նախարարութեան տեղեկություններուն համաձայն, Լիբանանի մէջ Նախորդ 24 ժամուան ընթացքին արձանագրուած են «Զորութեան» ժախրով 2245 վարակուածներ եւ մահացած է 2 պարագայ:

●ՍԵՒ շուկային մէջ ամերիկեան տուլարին փոխարժէքը 30.350 լ. ոսկի:

●ԶԱՆԴԱՊՏՈՒԹԵԱՆ միւլթթի շէյխ Ապտուլ Լաթիֆ Տըրիան երեկ Տար Ֆաթուայի մէջ ընդունեց

տեղեկատուութեան հարցերու նախարարի պաշտօնակատար Իսամ Շարաֆէտտին Սուրիա միջազգային խորհուրդներուն միջազգային կարիք կայ, եւ այդ կարիքը Լիբանանին տրուած առիթ մըն է, որ պետք չէ կորսնցնելը: «Եթէ կորսնցնենք այդ առիթը՝ ոճիւր գործած կ'ըլլանք», ըսաւ ան:

Պու Սաապ ընդգծեց, որ Լիբանանի իշխանութեան երեք պետերը համախոհ են ծովային սահմանագծումի առումով՝ աւելցնելով, որ թիւ 29 սահմանագիծը բանակցային գիծ չէ, այլ՝ Լիբանանին տրամադրուած ընտրանքներէն մէկը, որուն կարելի է դիմել, եթէ համաձայնութեան մը չյանգիւք:

●ԿԵՆՏՐՈՆԻՆԻ Նախարարի պաշտօնակատար Նասր Եասին յայտնեց, որ նշմարած են, թէ Պէյրութի նաւահանգիստին մէջ գտնուող ցորենի շտեմարանին հիւսիսային կողմը կը թեքի: Ան շեշտեց, որ կառավարութեան մօտ աղէտի խորհուրդին, ապահովական կառույցներուն եւ պատկան վարչություններուն հետ մնայուն գործակցութիւն կայ այս իմաստով, որ-

պէսզի նաւահանգիստին մէջ գտնուողները չտուժեն: Եասին շեշտեց, որ շտեմարանին այլ սիւներուն փուլ գալու պարագային պետք է դիմակապէր օգտագործել: Ան նշեց, որ Ելէկտրականութեան ընկերութեան հետ գործակցութիւն կայ՝ նաւահանգիստի շրջակայքի բնակչութեան Ելէկտրական հոսանք տրամադրելու առումով:

Շար.ը՝ Էջ 8

Ս. ԱՍՏՈՒՄԸԱՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՒՆԻ ԱՌԹՈՎ ԱՌԱՓՕՏԵԱՆ ԱՂՕԹՔԻ ՇԱՐԱԾ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒՄԸԱՆԻ ՎԱՆՔ, ՊԻՔԱՅԱՅԱ 8-12 ՕԳՈՍՏՈՍ 2022

Հովանաւորութեամբ ՆՕՕՏ Արմ մ. վեհափառ հայրապետին եւ կազմակերպութեամբ կաթողիկոսարանի Քրիստոնեական դաստիարակութեան բաժանմունքին, 8-12 օգոստոս 2022-ին, ամէն առաւօտ ժամը 10:00-ին, Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան մէջ, Սուրբ Աստուածածին Վերափոխման տօնին առիթով տեղի պիտի ունենայ դասախօսական շաբթ մը՝ նուիրուած Սուրբ Կոյս Աստուածածին Մարիամին:

Կը հրաւիրենք մեր ժողովուրդի բոլոր զաւակները՝ մասնակից դառնալու հոգեպարար աղօթքներուն եւ խորհրդածական պահերուն, լեցուելու հայ եկեղեցւոյ կրօնական ապրումներով եւ Ս. Աստուածամօր մայրութեան նուիրական օրինակով:

ԾԱՆՕԹ. Մասնակցիլ փափաքողներուն համար փոխարարականքեր տրամադրուած պիտի ըլլան ամէն օր, առաւօտեան ժամը 8:30-ին, Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ մուտքին, Ս. Ագնէս վարժարանի մօտ, 2ալքա (Թիքո-Թիքո) եւ Արթիլիասի մայրավանքին դիմաց:

ԶԻՐԱՏՈՒՆԵԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՐԱԿՈՒԹԵԱՆ
ԲԱԺԱՆՍՈՒՆՔ

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՊՐԵԼԱԿԵՐՊ Է, ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆ

Յերթական անգամ արդեն մեր երկրի դաւաճան իշխանութիւնը արգելում է դաշնակցականների մուտքը Յայաստան, արգելում է Յայ դատի պաշտպանների մուտքը Յայաստան:

Լա՛ւ, դաշնակցականներին արգելեցիր, իսկ դաշնակցականութեան մուտքը Յայաստան ո՞նց ես արգելելու: Չէ՞ որ դաշնակցականութիւնը ապրելակերպ է, մտածողութիւն:

Դու շա՛տ լաւ գիտես, որ իւրաքանչիւր հայրենասեր հայի մէջ գոնէ մի քիչ դաշնակցականութիւն կայ՝ անկախ նրա կուսակցական պատկանելիութիւնից: Դաշնակցականութեան մուտքը չե՛ս կարող արգելել:

Այդ արգելանքները ցոյց են տալիս, թէ ինչքա՛ն ամուր է Դաշնակցութիւնը բռնել իշխանութիւնը կորցնելու քո վախերը: Այդ արգելանքները ցոյց են տալիս, թէ ինչքա՛ն ամուր է Դաշնակցութիւնը բռնել ի սկզբանէ երկիրը կործանման տանելու, պետութիւնը քանդելու քո ծրագրերը բացայայտուելու նկատմամբ քո վախերը: Այդ արգելանքները ցոյց են տալիս, որ՝

- Դու համոզուած ես, որ Դաշնակցութիւնը այն ուժն է, որ երբեք հայրենիքը փրկելու, հայրենիքն ազատագրելու, հայրենիքն ամրացնելու իր ծրագրերից չի հրաժարուելու:

- Դու համոզուած ես, որ Դաշնակցութիւնը ամեն ինչ կ'անի այդ ամենը կեանքի կոչելու համար, դրա համար ունի համարժեք ներուժ:

- Դու վախենում ես, որ Դաշնակցութիւնը պատասխան է պահանջելու քեզանից ու իմ խմբակից՝ դաւաճանութեան համար:

- Դու հենց դրանից ես վախենում, բայց համոզւած եղիր, որ արգելանք դնելով Յայաստան մուտքի վրայ, դու ինքդ հանրութեան ուշադրութիւնը հրաւիրում ես հենց Դաշնակցութեան հայեանսեր, ազգաւորէ գործունեութեան վրայ:

- Դու դրանով հայրենասեր, պետականամետ հանրութեանը աւելի ես համախմբում Դաշնակցութեան շուրջ: Համոզուա՛ծ եղիր, որ փոս փորողն ինքն է ընկնում իր փոսը...

ԱՐՄԵՆՈՒԷ ԿԻՐԵՆԵԱՆ
ՀՀ ԳՄ անդամ,
ՀՀ ԱԺ «Յայաստան» խմբակցութեան
պատգամաւոր

ԳՈՐԸ, ՄԻՆԷՆ ԵՒ ՆԻԿՈԼԻ ԱՆՅԱԶՈՂ ՓՈՐՁԵՐԸ



2021 թուականին ՀՀԴ Երիտասարդական գրասենյակը նախաձեռնեց «Դէպի Սիւնիք» ծրագիրը: Անցեալ ամիսներուն սիւնեցի երիտասարդներուն դիմադրողական ոգին բարձր պահելու եւ ՀՀԴ Երիտասարդականի համաշխարհային ցանցին նեցուկը ապահովելու համար բազմաթիւ ծրագիրներ կազմակերպուեցան: «Վերելք Սիւնիք», սփիւռքէն դէպի Կապան երիտասարդական գործուղումներ, պատանեկան ճամբարներ, Սիւնիքի հիմնախնդրի գծով ուսանողութեան նուիրուած խորհրդաժողովներ ու ուսումնասիրութեան մրցանքներ, ահա քանի մը օրինակներ այն մեծածաւալ աշխատանքէն, որ իրագործուեցաւ եւ տակաւին կը շարունակուի:

Յստակ է, որ Ազերիներն ու անոնց ծառայող Նիկոլ Փաշինեանը մտահոգ են Արցախի եւ Սիւնիքի մէջ մեր երիտասարդներու տարած աշխատանքով: Ազերիները կը սպառնան եւ մեզ կը կոչեն **ռեվանշիստներ**, իսկ Նիկոլը՝ որպէս անոնց կամակատարը՝ գործի կը լծուի խոչընդոտելու այս աշխատանքները:

Առաջին քայլը ՀՀԴ երիտասարդականի աշխատանքները համակարգելու համար Սիւնիք տեղափոխուած, ՀՀԴ-ՀԵՄ-ի անդամ Գոռ Մաթեոսեանի կալանաւորումն էր: Երկրորդ քայլով, այսօր, Նիկոլը արգիլեց Սիւնէ Արահամեանին՝ մուտք գործել Յայաստան: Ան պիտի մասնակցեր Կապանի մէջ կազմակերպուող ՀՀԴ պատանեկան ճամբարի մը:

ՀՀԴ-ի երիտասարդները Նիկոլի եւ իր վարչախումբին մղձաւանքը դարձած են:

Նիկոլին փորձերը անյաջող են, ան չարաչա՛ր կը սխալի. ՀՀԴ երիտասարդները սփիւռքի մէջ պիտի շարունակեն իր եւ իր ներկայացուցիչներուն դէմ իրենց կտորկ ընդդիմութիւնը եւ առաւել աշխուժութեամբ պիտի ծաւալեն Սիւնիքի ու Արցախի մէջ իրենց աշխատանքները:

Նիկոլը իր այս քայլերով պիտի չկարենայ սանթաշար մը իսկ մեզ շեղել մեր նպատակներէ: Արցախի, Սիւնիքի եւ ընդհանրապէս հայրենիքի որեւէ հատկանիշն հետ ՀՀԴ աշխարհասփիւռ երիտասարդութեան կապը Նիկոլի պառակտող փորձերէն եւ ՀՀԴ-ի դէմ անոր ատելութենէն շա՛տ աւելի հզօր է:

ՅՈՎԱԾ ՏԵՐ ԳԵՈՐԳԵԱՆ
ՀՀԴ Բիւրոյի անդամ

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԵՒ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԶՐՈՅՑ ՈՒՆԵՑԱՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՀԵՏ



«Սփիւռքի տարի» հըռ-չակման առնչուած աշխատանքներու ծիրին մէջ շաբաթ, 30 յուլիս 2022-ին լիբանանահայ երիտասարդական եւ ուսանողական միութիւններէն աւելի քան 80 երիտասարդներ հաւաքուած էին Ս. Աստուածածնայ վանքի համալիրին մէջ (Պիքֆայա) գտնուող Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան դպրեվանքի սրահին մէջ՝ մասնակցելու համար Արամ Ա. հայրապետին հովանաւորութեամբ Յայ եկեղեցւոյ համալսարանական ուսանողներու միութեան կազմակերպած «Սփիւռքահայ երիտասարդ» այսօր եւ վաղը» խորագրեալ միօրեայ զրոյցին:

Զրոյցին միացաւ նաեւ վեհափառ հայրապետը եւ աւելի քան մէկ ժամ հանդիպում ունեցաւ մասնակից երիտասարդներին հետ,որոնք առիթ ունեցան նաեւ հայրապետին ուղղելու իրենց հարցումները եւ կիսելու իրենց մտահոգութիւնները:



զգուշաւոր մօտեցում կ'ունենայ ապագայի նկատմամբ, իսկ Նոր սերունդը՝ աւելի յանդուգն կերպով դէպի ապագայ: Այս ծիրին մէջ հայրապետը անդրադարձաւ արհեստագիտութեան եւ ճարտարագիտութեան նորարարութիւններուն ճամբով երիտասարդութեան կարելու ներդրումին որեւէ համայնքային ծրագրի մէջ եւ յորդորեց չվախնալ բննելէ հայկական կառոյցներուն իրավիճակները, որպէսզի կադապարուած մտածողութիւններու մէջ



Ողջունելով երիտասարդները՝ Արամ Ա. իր ուրախութիւնը յայտնեց ի տես անոնց ներկայութեան ու գործնականակցութեան, որոնք մեր ազգը դիմագրաւող մարտահրաւերներուն նկատմամբ պատասխանատուութեամբ իրենց ներդրումը բերելու յանձնառութիւնն ու գիտակցութիւնը ունին, եւ որոնք կը հաւատան, թէ մեր ազգի ներկային ու ապագային երաշխաւորներն են իրենք: Վեհափառ հայրապետը կարեւորութեամբ ընդգծեց, որ ընկերութիւն մը ապագայ չի կրնար ունենալ առանց երիտասարդ խաւին, եւ անոր հիմքն ու այժմեակաւորութիւնն տուողը ու ապագային բացող ուժը երիտասարդութիւնն է: «Սա տեսութիւն չէ եւ ոչ ալ պետք է ըլլայ, այլ կեանքի պետք է վերածուի: Իմ սպասումն է, որ մեր կեանքի զանազան բնագաւառներու ղեկավարները ես այսպէս մտածեն, ծրագրեն ու գործեն. իսկ երիտասարդութիւնը, իր կարգին, այսպէս ընելու պատրաստակամութիւնը ունենայ», ըսաւ կաթողիկոսը:

Ան դիտել տուաւ, որ երիտասարդներուն մասին չէ, որ պետք է խօսիմք, այլ անո՞նց հե՛տ պետք է խօսիմք, որովհետեւ երկուստեան կամեմքն անհրաժեշտութեան ճամբով յաջող սերունդն ու Նոր սերունդը գիրար կրնան լսել եւ ծանկնալ: Երիտասարդութիւնը ըսելիք եւ ընելիք ունի: Անգ Նորունդը առաւելաբար դէպի անցեալ կը նայի, որովհետեւ աւելի

մնալով՝ չիկնան անոնք: Յայրապետը նաեւ յայտնեց, որ բնական երեւոյթ է տեսակետներու զանազանութիւնը համայնքային կեանքէն ներս, եւ, այս պարագային, երիտասարդութեան դերակատարութիւնը ճշդորոշիչ է, որովհետեւ ինք է ներկայ աշխարհին հետ ամենէն շատ քայլ պահողը:

Շար.ը՝ էջ 6

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԸ ԿԸ ԳՐԵՆ ԾՐԱՐ ՄԸ ՀԱՅ՝ ՕՐՈՒԱՆ ՄԵՂՔՍ

Վաղ առաւօտուն հեռածայնս իմ Whats app-ի կանչով կ'արթնցնէ զիս: Voice-ը կը լսեմ, լաւ լուրը կ'առնեմ: Փռապան մեր կրցեր է պահել Շրար մը հաց, զոր չեն գտներ շատեր Մեր այս օրերուն Նոյնիսկ շարքերով Թէ որ սպասեն երկար ժամերով:

Սակայն փռապանն զիս կը զգուշացնէ Փուռին ետեւի գաղտնի դռնէն ներս Մտնեմ պայուսակով մը սեւ, ուր պահեմ Շրարը հացին, այսօրուան մեղքս, Չոր ես գործեցի ցուցմունքներով ճիշդ Մեղքիս մեղսակից խեղճ փռապանին:

Սեւ պայուսակովս կ'ուղղուիմ դէպի տուն Մարաշի թաղով հետապնդող զիս Նայուածքներուն հետ՝ շատ հետաքրքիր Որ կ'ուզեն գիտնալ բեռը պայուսակիս, Առօրեայ մեղքս, զոր ես կը գործեմ, Ներում կը խնդրեմ աղօթքներուս մէջ:


ՍԻՄՈՆ ԿՈՍՏԱՆԴԻՆԵԱՆ
29/7/2022, Լիբանան

ՄԵԾԱՐԵՆՅԵԱՆ ԵՐԵԿՈՐԵՐ - ԱՅՆՃԱՐ ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱԶԵԱՆ



Այնճար հայաւանին մէջ կիրակի, 26 յուլիս 2022-ի երեկոյեան տեղի ունեցաւ «Մեծարենցեան երեկոներ»-ու մշակութային ծեռարկը՝ Նուիրուած մեծ երգահան եւ երգչախումբի ղեկավար Բարսեղ Կանաչեանին:

Նախքան ծեռարկը՝ օրուան հանդիսավար Չաւեն Ղարիպեան ներկայներէն խընդրեց մէկ վայրկեան յոտնկայս յարգել յիշատակը Մովսէս Այնթապեանի, որ քառասուն օրեր առաջ մահացած էր: «Ան Այնճարի Գալուստ Կուլաբեան-Յառաջ վարժարանի Նախկին տնօրէն եւ Մեծարենցեան երեկոներու ծեռարկներու հիմնադիր եւ քաջալերողը եղած էր», նշեց ան:



Ապա հանդիսավարը ներկայացուց Բարսեղ Կանաչեանի կենսագրութեան հիմնական գիծերը՝ նշելով, որ ան ծնած է 1885-ին, Պալաւեան թերակղզի Ռոտոսթօ քաղաքը, այժմ թրքական հողամաս՝ Թեքրոտաղ անունով:

Բարսեղ Կանաչեանի ընտանիքը կը փոխադրուի Պոլիս՝ Կեռնի Փաշա, երբ ան երեք տարեկան էր: Ան կը յաճախէ դպրոց, անոր հայրը կոշկակար էր: 1890



1914. Կոմիտասեան սաները, վերի շարը՝ Վաղարշակ Սրուանտեանց եւ Բարսեղ Կանաչեան, Բ. շարը՝ Վարդան Սարգիսեան, Կոմիտաս Կոր. Ա. Ապաճեան, Նստած՝ Յայկ Սեմերեան եւ Միհրան Թումաճեան:

թուականին հայերուն դէմ հալածանք կը սկսի թուրք պետութեան կողմէ: Կանաչեանին ընտանիքը անապահով զգալով՝ կը գաղթէ Պոլկարիա, սկիզբը Սիւլի քաղաք, ապա՝ այդ օրերու մայրաքաղաք Վանու: Բարսեղ Կանաչեան կանուխէն հակում եւ հետաքրքրութիւն ցուցաբերած է երաժշտութեան նկատմամբ, տակաւին եօթը տարեկան՝ տախտակի կտորի մը վրայ թելեր կը գամէ ու եղանակ կը յօրինէ: Ան ուսումը աւարտելէ ետք վանքի կաճառականի մը մօտ կ'աշխատի որպէս գրագիր:

Հակառակ նիւթական նեղ պայմաններուն, հայրը տեսնելով իր զաւակին հակումը երաժշտութեան նկատմամբ՝ ջուրակ մը կը նուիրէ անոր: Կանաչեանի երաժշտութեան առաջին ուսուցիչը կ'ըլլայ Նաթան Պէյ Ամիրխանեան, որ աւարտած էր Պերլինի արքայական երաժշտանոցը: Կանաչեան մաս կը կազմէ Ամիրխանեանի երգչախումբին:

Շրջան մը վերջ Բարսեղ Կանաչեանի ընտանիքը կը գաղթէ Ռումանիա: Հին Կանաչեան կը հետեւի երաժշտութեան ուսումի, Նոյն ատեն դաս կու տայ աշակերտներու:

1905- թուականին շրջանին մէջ քաղաքական տակնուվրայութիւն կը տիրէ, Կանաչեանի ընտանիքը կը տեղափոխուի տեղէ տեղ: Անոնք կը վերադառնան Պոլկարիա. իսկ 1908-ին՝ Պոլիս, ուր տեղի կ'ունենար օսմանեան պետութեան Նոր սահմանադրութեան ինքնակազմ: Հին կը հանդիպի Կոմիտաս վարդապետին ու կը դառնայ անոր աշակերտը: 1915՝ Համաշխարհային Ա. պատերազմ, հայկական ջարդ, ցեղասպանութիւն:

Շար.ը՝ էջ 6

ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՐՑԱԽԻ ԳԱՆՁԱՍԱՐ ԿԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻՆ ՄԷՋ ԿԱՅԱՑԱՒ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ



Ինչպես 782 տարի առաջ, նոյնպես 24 յուլիս 2022-ին Գանձասարի մէջ մեծ շուքով նշուեցաւ Հայ առաքելական եկեղեցւոյ տաղաւարներէն՝ Յիսուս Զրիստոսի Պայծառակերպութեան տօնը: Ուխտագնացութեան ներկայ գտնուեցան՝ Արցախի Հանրապետութեան պետական նախարար Արտակ Բեգլարեանը, կառավարութեան անդամներ, զինուորականներ, հեռաւոր ու մօտակայ վայրերէ եկած ուխտաւորներ, ինչպէս նաեւ՝ Շուշիի «Կարանդա» երգչախումբի հիմնադիր-ղեկավար, Համագգայիի Կեդրոնական վարչութեան ատենապետ Չաքար Բէշիշեանը:

Բէշիշեան առաջին անգամն էր, որ ներկայ կը գտնուէր այս ուխտագնացութեան: Ան լրագրողի մը հետ զրոյցի ընթացքին նշեց, որ «Տօնը ինքնին մեզի կը խոստանայ պայծառութիւն, պայծառ ապագայ, այդ հաւատքով, յոյսով ու ներշնչումով է, որ կ'ապրինք, եւ այդ բոլորով է, որ մենք եկած ենք



այստեղ: Իսկ այսօրուան տօնին՝ Պայծառակերպութեան խորհուրդը, արդէն յաղթութեան, ուժի, գեղեցիկ հեռանկարներ, հորիզոններ ուրուագծող նշան է, եւ մենք պետք է կառնած մնանք այդ նշաններուն՝ առանց յուսահատելու, առանց վիստելու յառաջանալով միշտ առաջ»:

Շար.ը՝ էջ 6

«ԳՆԵՑԷՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ». ԶՈՒՅԹԱՐԱՅ ԲԱՐԵՐԱՐԸ ԱՇԽՈՒԺԱՑՈՒՅ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏՏՈՂ ԻՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԻՒՆԸ

Զուէթահայ բարերար, գործարար Կիրակոս Գոյումճեան հանդէս եկաւ «Գնեցէ՛ք Հայաստանի մէջ» նախաձեռնութեամբ, որուն նպատակն է նպաստել տնտեսութեան զարգացման: Կիրակոս Գոյումճեան լրագրողներու հետ զրոյցի ընթացքին նշեց, որ նախաձեռնութեան շուրջ աշխատանքները սկսած էին 2019 թուականին, սակայն համավարակը պատճառ դարձաւ, որ ծրագրուած աշխատանքները կիսաւարտ մնան: Այժմ ջուէթահայ բարերարը կրկին Հայաստանի մէջ է, նպատակ ունի տարբեր շրջանակներու մէջ աշխուժացնել «Գնեցէ՛ք Հայաստանի մէջ» արշաւը:

«Ինչպէս գիտենք, վերջին շրջանին



զբօսաշրջութեան աշխուժութիւն կը նկատուի: Շատեր կը նախընտրեն Հայաստան գալ եւ իրենց հանգիստը այստեղ կազմակերպել:

Շար.ը՝ էջ 6

«ՍԻ. ԷՆ. ԷՆ.»-Ը ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆԵՐԱՌԱՋ Է ԱՇԽԱՐՀԻ ԼԱՄԱԳՈՅՆ ԱՐՇԱՒԱՅԻՆ ՈՂՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Ամերիկեան հեղինակաւոր «ՍԻ. ԷՆ. ԷՆ.»-ը իր ճանապարհորդական ուղիներու ծիրին մէջ առանձնացուցած է աշխարհի լաւագոյն արշաւային ուղղութիւններէն՝ արահետներէն 23-ը՝ ներառելով նաեւ Հայաստանը:

Հայաստանին վերաբերող հատաձը վերնագրուած է՝ «Հայաստանը եւ Մետաքսի ճանապարհը»: Գրութեան մէջ ընդգծուած է, որ Հայաստանի մէջ կը գտնուին եւրոպայի լաւագոյն արահետներէն քսան մը հատը:

«Հայաստանն ու Մետաքսի ճանապարհը» 11-օրեայ ճանապարհորդութիւնը կ'անցնի լաւագոյն երթուղիներով՝ միացնելով ԵՐԻՆԵՍԵՕ-ի պահպանութեան տակ գտնուող Սանահին եւ Հաղբատ վանքերը, անցնելով կրաքարային լեռնագագաթներով եւ սաղարթախիտ անտառներով՝ Գեղամայ վայրի լեռներուն մէջ՝ քայլարշաւի եւ երկրի ամենաբարձր լեռը՝ Արագածի գագաթը բարձրանալու կարելիութեամբ», նշուած է յօդուածին մէջ:



Շար.ը՝ էջ 6

ԱՐՏԱԿ ԲԵԳԼԱՐԵԱՆ ԴԱՀՐԱՒԻ ՄԷՋ ՄԱՍՆԱԿՑԵՑԱԻ «100 ՏՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՄԷՋ» ԾՐԱԳԻՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՄՈՒՏԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ

Արցախի Հանրապետութեան պետական նախարար Արտակ Բեգլարեան յուլիս 30-ին Ասկերանի Դահլիւզ գիւղին մէջ մասնակցեցաւ «100 տուն Արցախի մէջ» ծրագրի բնակարանամուտի արարողութեան, որուն շրջանակներուն մէջ տեղահանուած 6 ընտանիք ստացաւ նորակառոյց բնակարաններու բանալիները:

Պետական նախարարը շնորհաւորեց տանտերը եւ ծրագիրը նախաձեռնող խումբը՝ Հայաստանի Հանրային հեռուստաըն-



կերութիւնը եւ «Ապրելու Արցախ» հիմնադրամը, բոլոր նուիրատուներն ու աջակիցները՝ Արցախի ժողովուրդի կողքին հաստատուն կանգնելու առաքելու-



թեան շրջանակներուն մէջ ցուցաբերուած նիւթական եւ բարոյական աջակցութեան համար:

Շար.ը՝ էջ 6

ԱՐՑԱԽԻ ԲՈՆԱԳՐԱՒՈՒԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՐԴԻ ՆԻՍՏ

Արցախի Հանրապետութեան պետական նախարար Արտակ Բեգլարեանի նախագահութեամբ, 28 յուլիսին գումարուեցաւ Արցախի Հանրապետութեան բռնագրաւուած տարածքներու մշակութային ժառանգութեան պաշտպանութեան պետական խորհուրդի երկրորդ նիստը: Այս մասին տեղեկացուցին Արցախի պետական նախարարի աշխատակազմի տեղեկատուութեան եւ հասարակութեան հետ կապերու բաժինէն:

Բեգլարեան բարձր գնահատեց խորհուրդի կազմութեան ետք կարճ ժամանակաշրջանի մը ընթացքին իրականացուած փաստաշարը աշխատանքը եւ խորհուրդի անդամներուն հետ քննարկեց հետագայ աշխատանքներու ուղղութեան եւ ծաւալներուն վերաբերող հարցերը:

Խորհուրդի ծրագիրներու կատարման ընթացքի մասին զեկոյցով հանդէս եկաւ խորհուրդի քարտուղար Սերգէյ Շահվերդեանը:



Հաստատուեցաւ Արցախի Հանրապետութեան բռնագրաւուած տարածքներուն մէջ մնացած թանգարաններու եւ ցուցարաններու հաւաքածոներու ցանկը:

Քննարկուեցան հետազոտական եւ տեղեկատվական զանազան միջոցառումներու իրականացման ընթացքին վեաբերող հարցեր՝ յստակացնելով խորհուրդի եւ լիազօր մարմիններու կատարելիքները:

ԵԳԻՊՏԱՅԻ ԲԵՄԱՂՐԻՉ ԻՍԱՄ ՆԱԺԻՆ «ՆԱՐԵԿԱՅԻ» ԿԵԴՐՈՆԻՆ ՄԷՋ ՑՈՒՑԱՂԻՑՑ ԱՐՑԱԽԵԱՆ 44-ՕՐԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ ԿԱԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԺԱՊԱՒԵՆԸ



Եգիպտացի լրագրող եւ բեմադրիչ Իսամ Նաժիի «Մոռացուած հայրենիք» վաւերագրական ժապաւենը աշխարհին կը պատմէ արցախեան 44-օրեայ պատերազմին, Հայաստանի եւ Ազրայեանի սահմանային կեանքին, Արցախի փախստականներուն մասին, որոնք այժմ կը բնակին Սիւնիքի մէջ:

Ժապաւենին անդրանիկ ներկայացումը տեղի ունեցաւ «Ոսկէ ծիրան» 19-րդ միջազգային շարժապատկերի փառատօնի ծիրան մէջ, իսկ յուլիս 29-ին հանրութեան լայն շրջանակ մը զայն դիտելու կարելիութիւնը ունեցաւ «Նարեկացի» արուեստի միութեան մէջ:

Իսամ Նաժիին լրագրողներու հետ զրոյցի ընթացքին ըսաւ. «Կը կարծեմ, որ միջազգային հանրութիւնը այնքան ալ խորամուխ չէ եղած արցախեան հիմնահարցին մէջ, ուստի իմ պարտքս է ժապաւենի միջոցով պատմել իրողութիւնը»:

Նաժիին պատերազմի ընթացքին Հայաստան չէ

գտնուած: Եկած է պատերազմէն վեց ամիս ետք: «Պատերազմի ժամանակ այնքան ալ դիւրին չէր Հայաստան գալը, որովհետեւ այդ չափազանց զգացական պիտի ըլլար: Ես չէի փափաքեր այդ ապրումները փոխանցել աշխարհին, կ'ուզէի՝ մարդիկ հանդարտին եւ մտածեն կատարուածին մասին», նշեց ան:

Իսամ Նաժիին կը կարծէ, որ հայերը բազմիցս կոտորուելու վերականգնել են, եւ անոնք ամուր հոգի ունին: Անոր խօսքով, միջազգային հանրութիւնը պետք է տեղեկացուած ըլլայ, իմանայ ճշմարտութիւնը, կանգնի Հայաստանի կողքին, որպէսզի կատարուածը չկրկնուի:

Շար.ը՝ էջ 6

Պատրաստեց՝ ՄԱՐԻՆԱ ՀԱՄԱՄՃԵԱՆ

ԱՐՅԱԽ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՋՆԱԲԵՐԴ

ՄԵԼԻՔՆԵՐՈՒ ԽՆԴՐԱԳԻՐԻՆ ՄԱՍԻՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԵՒ ՓԱԽԷԼ Ա. ԿԱՅՍԵՐ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

Վարանդայի մելիք Ջուժնուդ եւ Գիւլիստանի մելիք Ֆրէյդուն ռուսահայոց առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոս Արղուբեանի միջնորդութեամբ 29 մարտ 1799-ին խոնարհագոյն աղերսագիր ներկայացուցած էին Փաւել Ա. կայսրին:

Ա ղ է ր ս ա գ ի Ր ի ն հետ մելիքները առանձին թուղթ մատուցեցին կայսեր՝ «Հինգ հայ մելիքներու անուններն ու գաւառները» խորագիրով: Մելիքներուն մատուցած թուղթը համայնի մելիքութիւններու պաշտօնական նկարագրութիւնն էր, ուր կ'ըսուէր.

«Մելիքներու ընդհանուր տիրապետութիւնը կը կոչուի Ղարաբաղ»:

Առաջինը անոնցմէ՝ մելիք Ջուժնուդ, որդի մելիք Շահնագարի, որուն գաւառը կը կոչուի Վարանդա եւ բերդը՝ Շուշի. անոր հետ է որդին եւ իւզպաշի մը:

Երկրորդը՝ մելիք Արով, որդի մելիք Յովսէփի, որուն գաւառը կը կոչուի Կիզիմիդորդ եւ բերդը՝ Գիւլիստան, որ արդէն իր հպատակներու մեծ մասը հանած է այդ գաւառէն, յոյս դնելով Նորին Մեծութեան ողորմութեան վրայ, եւ տեղափոխած Վրաստան՝ վրաց թագաւոր Գեորգիի հովանաւորութեան տակ: Անոր եղբորորդի մելիք Ֆրէյդուն վերոյիշեալ մելիք Ջուժնուդի հետ այժմ կը գտնուի այստեղ (Պետերբուրգ):

Երրորդը՝ մելիք Ռոստոմ, որդի իւզպաշի Ալլահվերդիի, տեղապահ վախճանած մելիք Մեջլումի, որ մելիք Յաթամի որդին էր եւ ձգած է տասնչորս տարեկան որդի մը՝ մելիք Յաթամ անունով, իսկ անոնց գաւառը կը կոչուի Ջրաբերդ: Թէեւ անոնց տունը առաջնութիւն ունի այս հինգ մելիքական տուներու մէջ, բայց որովհետեւ այժմ այդ տունը իր սեփական մելիքը չունի, մելիք Մեջլումի գաւակին անչափահասութեան պատճառով, այլ ունի միայն վերոյիշեալ տեղապահը, ուստի եւ առաջնութիւնը կը տրուի մելիք Ջուժնուդին:

Չորրորդը՝ մելիք Աբաս, որդի մելիք Բախտամի, որուն գաւառը կը կոչուի Դիգակ:

Հինգերորդը՝ մելիք Ալլահվերդի, որդի մելիք Միրզախանի, որուն գաւառը կը կոչուի Կաչեն:

Վերոյիշեալ մելիքները իրենց իշխանութեան տակ ունին իւզպաշիներ, այսինքն՝ զօրքի հրամանատարներ, որոնցմէ մէկ քանին այս աստիճանը կը ստանան ժառանգաբար, իսկ ոմանք կը ստանան իրենց տէրերէն՝ մելիքներէն, իրենց մատուցած ծառայութիւններուն համար»:

Պետերբուրգի մէջ մելիքներուն ուղղութիւն տուողը եւ անոնց աղերսագիրն ու թուղթը պատրաստողը Յովսէփ արքեպիսկոպոսն էր: Մելիքները միայն իրենց ստորագրութիւնը դրած էին:

Յովսէփ արքեպիսկոպոս հայութեան փրկութեան ուղին Ռուսական կայսրութեան Անդրկովկասեան արշաւանքներուն ու զենքի ուժով Յայաստանը ազատագրելուն մէջ կը տեսնէր: Ան ամէն միջոցի դիմած էր որ իրականութիւն դառնայ ռուսական արշաւանքը: Ան տեսաբար կ'արժարծէր Յայաստանի ազատագրութեան հարցը եւ մնայուն կերպով ռուս ղեկավարութեան ուշադրութիւնը սեւեռած կը պահէր Արցախի նուաճման կարելութեան եւ օգտակարութեան վրայ:

Սակայն ռուս քաղաքական ու ռազմական գործիչները այլեւս ալ պատրաստակամ չէին արծազանգելու հայ արքեպիսկոպոսի կոչերուն, որոնք յաճախ անպատասխան կը մնային:

Յովսէփ արքեպիսկոպոս կը գիտակցէր, որ ռուսական արքունիքը կովկասեան պետութիւններու ազատագրութեան հարցին մէջ կ'առաջնորդուի իր քաղաքական շահերէն մեկնելով, իսկ ինք արքունիքին համար կը ծառայէ իբրեւ զենք՝ Անդրկովկասի նուաճման ճանապարհին:

Յովսէփ արքեպիսկոպոսի բանակցութիւններուն նպատակաւոր Յայաստանի պետականութեան վերականգնումն էր: Բայց, տեսնելով որ անկախութիւնը հեռաւոր յոյս է, եւ նկատի ունենալով յատկապէս Արցախի սպառնացող վտանգը, ան կը մտածէր, իբրեւ փրկութեան միջոց, արցախահայութիւնը Ռուսաստան կամ Կովկասի մէջ վայր մը տեղափոխել:

Փաւել Ա. կայսր, ընդառաջելով Վրաստանի Գեորգի ԺԲ. թագաւորի խնդրանքին, 18 ապրիլ 1799-ին անոր անդրանիկ որդին՝ Դաւիթ զահաժառանգ հռչակեց:

Փաւել Ա. 22 ապրիլ 1799-ին հրամանագիր հրապարակեց ուղղուած գանձապետ Վալիլեի, թելադրելով իբրեւ ամենամեայ թոշակ մելիք Ջուժնուդին յատկացնել 1400 ռուբլի. մելիք Ֆրէյդունին՝ հազար ռուբլի, իսկ Ջուժնուդի որդի Պօղոսին՝ 600 ռուբլի գումար: Միաժամանակ կայսրը կը պատուիրէր ոսկիէ ութ շքանշան՝ հայ մելիքները պարգևատրելու համար:

Մելիքներուն խնդրագիրին ընդառաջելու անհրաժեշտութիւնը հիմնաւորելու համար, «Նկատառումներ Դարաբաղի մելիքներու խնդրագրի մասին» խորագիրը կրող գրութիւն մը ներկայացուեցաւ արքունիք, որուն հեղինակը հաւանաբար Անդրկովկասի իրադարձութիւններուն լաւատեղեակ Լաշկարովն էր:

Վաւերագիրին մէջ կը նշուի, որ «Քրիստոնէութեան



Օխտը եղջի վանքը Ասկերանի շրջանի Պատարա գիւղէն հիւսիս-արեւմուտը, անտառածածկ բլուրի լանջին



թշնամիներու լուծին ներքեւ վաղուց ի վեր տառապող հայոց ազգը... Կ'այրի բաղձանքով՝ իրեն տեսնելու անկախութեան մէջ եւ ըլլալու սեփական տիրողի կառավարման ներքեւ: Ղարաբաղի մարզին մէջ, իբրեւ հին Յայաստանի միակ մնացորդը, որ պահպանած է իր անկախութիւնը սեփական տիրողներու իշխանութեան ներքեւ, այս ազգը Աստուծոյ օգնութեամբ եւ անկէ անբաժան Յամառուսաստանեան կայսրութեան հզօր հովանաւորութեամբ կը ցանկայ միայն այդ յոյսը: Ներկայիս այս մարզի կեդրոնը մահմետականներու լուծի տակ ոչ միայն հայոց ազգի համար այդ հեռանկարը կը սահմանափակէ, այլեւ այնտեղի ամրակուր վայրերուն տիրելով՝ Դարաբաղի մէջ պարսիկներու հաստատումով, իրենց բնական դիրքով Կովկասի կիրճերուն մէջ գրեթէ անաթիկ, Յամառուսաստանեան բարձրագոյն արքունիքի (հովանիին տակ գտնուող) Վրաստան եւս կը վտանգուի՝ անոնց յաճախակի ու անակընկալ, անհանգստութիւն եւ ւաւերածութիւն ձգող յարձակումներու հետեւանքով անոր այդ մասի սահմաններու մերկացումով: Միայն վրաց թագաւորութեան բարորութեան եւ ամբողջակաւորութեան ապահովման մէջ Յամառուսաստանեան կայսրու-

րութեան սահմաններուն մէջ մտած եւ հայաթափ եղած Յայաստանի Ղազախ գաւառին մէջ:

Ղազախի վերակենդանացումը հաւասարապէս ձեռնտու պէտք է ըլլար թէ՛ հայ եւ թէ վրաց թագաւորութեան:

Արցախի հայ մելիքները ոգեւորելու նպատակով կ'առաջարկուէր. ա) Նուէրներ ու շքանշաններ յանձնել մելիքներուն: Բ) Վրաց թագաւորը համոզել նշուած տարածքը զիջելու հայ մելիքներուն: Գ) Հայ եւ վրաց կողմերուն միջեւ պայմանաւորաժողութեան ձեւակերպում տալ հանդիսաւոր պայմաններու մէջ: Դ) Թոյլատրել մելիքներուն ունենալու մնայուն զօրք եւ ատոր համար անոնց վարկ տրամադրել:

Կ'առաջարկուէր նաեւ «ի նշան եւ ի յիշատակ հայ ազգի նկատմամբ հովանաւորութեան, այս գաղութին տրամադրել քանի մը հրետանային սարքեր... եւ այդ սարքերու օգտագործման հմտանալու համար թոյլատրել այդ ազգէն քանի մը մարդ ընդգրկել Վրաստան գտնուող ռուսական զօրքերուն մէջ»:

Փաւել Ա. կայսր 2 յունիս 1799-ին հրովարտակ հրապարակեց, ուր կ'ըսուէր.

«Աստուծոյ ողորմութեամբ մենք, Փաւել Առաջին, կայսր եւ ինքնակալ համայն Ռուսաց եւ այլն, եւ այլն, եւ այլն:

Ինքնագլուխ եւ հռչակաւոր Դարաբաղի երկրի ազնիւ մելիքներուն՝ Վարանդայի տիրապետող Ջուժնուդ Շահնագարեանին եւ Գիւլիստանի տիրապետող Ֆրէյդուն Բեգլարեանին եւ Նոյն հռչակաւոր երկրի միւս տիրապետող մելիքներուն եւ իւզպաշիներուն, անոնց բոլոր ժողովուրդին մեր կայսերական ողորմութիւնն ու բարեհաճութիւնը:

Գոհութեամբ տեսնելով մեր նախարարութեան մեզի ներկայացուած զեկուցումներէն ձեր ընդհանուր անձնուիրութիւնը դէպի մեզի, մեծ կայսրը եւ համառուական գահը, Նոյնպէս եւ ձեր խնդիրը, որ, ձգելով հին հայրենիքը, ուր դուք հարստահարուած էիք, թոյլ տրուի ձեզի ստորագրեալ ժողովուրդներու հետ բնակութիւն հաստատել մեր կայսրութեան մէջ կամ մեր հովանաւորութեան եւ բարձր իշխանութեան տակ գտնուող Նորին բարձրութիւն Զարթիկի եւ Կախեթի թագաւոր Գեորգիի երկիրներուն մէջ եւ գործ ածել ձեր ուժերու աջակցութիւնը յօգուտ եւ ի պաշտպանութիւն անոր կալուածներուն:

Ձեր այդ ջերմեանը ցանկութեան մենք, մեծ թագաւորս, մեր կայսերական մեծութիւնը, սիրով զիջանելով եւ, համաձայն ձեր խնդրանքին, ընդունելով ձեզ մեր բարձր հպատակութեան եւ հովանաւորութեան մէջ, ամենաողորմածաբար բարեհաճեցանք թոյլ տալ վերոյիշեալ թագաւորին, որ ան ձեզի տայ, բնակութեան համար, ձեր խնդրած Ղազախ երկիրը, եթէ անիկա բնակեցուած չէ, կամ ուրիշ երկիր մը ըստ ձեր ցանկութեան, եւ ձգել ձեզի ձեր նախկին հայրենիքին մէջ ունեցած այն իշխանութիւնն ու արտօնութիւնները ձեր ստորագրեալ հայրերուն վրայ, Նոյնպէս եւ այն հայրերուն վրայ, որոնք Դարաբաղէն յօժարակամ կը կամեան գաղթել ձեր մօտ: Այս մասին մենք գրեցինք մեր կայսերական հրովարտակը Նորին բարձրութեան:

Իսկ ձեզի, ազնիւ տիրապետող մելիքներ, յայտնելով այդ մասին, կը ձգեց, որ դուք Նոյն թագաւորին հետ գործադրէք այն ամենը, ինչ կը վերաբերի ձեր ստորագրեալ հայրերուն եւ ուրիշ մեզի անձնուր մարդոց գաղթելու անոր (Գեորգի ԺԲ.ի) երկիրը եւ ձեր սեփական բնակութիւնը հաստատելու, ինչպէս վայել է հիւրերուն, պատշաճաւոր ազատութեամբ, օգուտներով եւ առաւելութիւններով:

Մենք կը յանձնարարենք, որ դուք տանիք թագաւորին մեր այդ կայսերական հրովարտակը, ցանկաւով, որ դուք ձեր կարիքներուն համար դիմէք թէ՛ անոր եւ թէ Վրաստան նշանակուած մեր նախարարին, մեր սիրեցեալ հաւատարիմ պետական խորհրդական Կովալենսկիին, որուն տրուած են պէտք եղած հրամանները այն բոլորի մասին, ինչ կը վերաբերի ձեր այնտեղ լաւագոյն եւ օգտակարագոյն կերպով բնակութիւն հաստատելուն:

Մենք յոյս ունինք ձեր հաւատարմութեան եւ անձնուիրութեան վրայ եւ ի հաստատութիւն մեր բարձր վեհապետական բարեհաճութեան դէպի ձեզ՝ ամենաողորմածաբար որոշեցինք ձեր կացութիւնը բարւոյնելու համար թոշակներ եւ շնորհեցինք մետաւներ»:

Փաւել Ա. կայսր Նոյն մտքով հրովարտակ գրեց վրաց Գեորգի ԺԲ. թագաւորին:



Լեռնահովիտ (Եղանգովներ) Քաշաթաղի շրջանի Աղաւնոյ գետի հովիտին մէջ

թեան մասնակցութեան առումով այս (խնդրանքի) յարգումը արդէն այնքան համոզիչ է, որ պէտք է սպասել մելիքներու այս խնդրանքի բարեհաճ լուծումը:

Մելիքներու խնդրանքին ընդառաջելը Ռուսաստանի համար նախընտրելի էր նաեւ այլ առումով: Գրութեան հեղինակը համոզում կը յայտնէ, որ Ռուսաստանի հովանիին տակ ստեղծւելիք հայկական պետութիւնը արագօրէն կ'ամրապնդուի, ամուր յենարան կը դառնայ եւ կարելի էր նշանակութիւն կ'ունենայ նաեւ Ռուսաստանի հետագայ քաղաքականութեան համար:

Հեռակայ այս նպատակներու իրականացման անհրաժեշտութենէն մեկնելով, գրութեան հեղինակը կը նշէ, որ իբրեւ առաջին քայլ պէտք է ընդառաջել մելիքներու խնդրանքին եւ անոնց բնակութեան վայր յատկացնել Վրաստանի թագաւո-



Սատաղիս Մարտակերտի շրջանին մէջ, Թարթառ գետի ձախ ափին

«ԳՆԵՅԷՔ ԶԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ»...

Շարունակում 4-րդ էջին

Այս արշավին եութիւնը այն է, որ մեր հայրենակից-ներուն կոչ ուղղելով խրախուսենք, որ իրենց կարիքնե-րուն համար Նախատեսուած ապրանքները գնեն Զա-յաստանի մէջ: Ինչ կարիք կայ դուրսէն բերելու ապ-րանքներ, եթէ այստեղ ամէն ինչ կայ, եւ կարելի է հան-գիստի ընթացքին գնել: Եթէ այս Նախաձեռնութիւնը տարածուլ ունենայ, ապա շահաւետ պիտի ըլլայ Զա-յաստանի համար», յայտնեց Կիրակոս Գույումճեան:

Անոր խօսքով, տնտեսապէս շահաւետ պիտի ըլլայ տեղի գործարարներուն, արտադրողներուն: Եթէ սպիւռքահայ զբօսաշրջիկները սկսին ամէն այցելու-թեան ժամանակ իրենց գնումներուն հիմնական մասը կատարել Զայաստանի մէջ, այդ կը նշանակէ, որ այս-տեղ այդ ապրանքներուն պահանջարկը կ'աւելնայ: Զետեւաբար ե՛լ վաճառողներուն, ե՛լ արտադրողնե-րուն համար լաւ պիտի ըլլայ: Ասկէ բացի՝ երկիր եկած օտար դրամանիշի արտարժոյթին ծաւալը պիտի աւել-նայ, եւ ասկէ պիտի շահի միայն պետութիւնը:

Կիրակոս Գույումճեան տարբեր առիթներով փորձեց աջակցութեան ծրագիրներով Զայաստանի եւ Արցախի կողքին գտնուի: Ան արաբական լրատուամիջոցներու

մէջ հանդէս եկաւ հայկական հարցերու իետ կապուած յօդուածներով: Կիրակոս Գույումճեան նկատեց, որ Զա-յոց ցեղասպանութեան հարցին հետ կապուած արաբա-կան երկիրներու մէջ տեղեկութեան պակաս կայ:

«Ընդհանրապէս արաբական աշխարհին մէջ հայ-կական հարցերը ներկայացնելու տեսանկիւնէ թերա-ցած ենք: Անհրաժեշտ չափով չենք կրցած մեր հարցը ներկայացնել արաբ ժողովուրդին: Շատերը ամբողջա-կան պատկերացում չունին Զայոց ցեղասպանութեան, հայկական այլ հարցերու հետ կապուած: Ես ալ որոշե-ցի յօդուածներով հանդէս գալ՝ ներկայացնելով հայկա-կան հարցերը, հակադարձելով ժխտողական դիրքո-րոշումներուն», ըսաւ Կիրակոս Գույումճեան:

Հաղորդենք, որ քուէթաիայ գործարարը հիմնած է «Ներսէս Շնորհալի» կրթական մրցանակը Զալէպի եւ Քուէթի երկրորդական վարժարաններու սաները խրախուսելու համար: Արդէն 20-է աւելի աշակերտ արժանացած է այս մրցանակին: Ըստ Կիրակոս Գու-յումճեանի, այս ծրագիրը նպաստած է մրցակցութեան եւ յառաջդիմութեան բարձրացման: Նախաձեռնութիւ-նը պիտի շարունակուի Նաեւ յառաջիկայ տարիներու:

ԵԳԻՊՏԱՅԻ ԲԵՄԱՂԻՉ ԻՍԱՍ ՆԱԺԻՆ «ՆԱՐԵԿԱՅԻ»...

Շարունակում 4-րդ էջին

Հեղինակը կը Նախատեսէ շարժան-կարը ցուցադրել Գորիսի եւ Գիւմրիի մէջ, այնուհետեւ՝ շարժապատկերի փառատօններուն: Ան ժապաւենի միջո-ցով կ'ուզէ ցոյց տալ, որ հայերը միայ-նակ չեն:

Բեմադրիչին հետ զրուցելու ընթաց-քին նկատեցինք, որ ան կը կրէ մատա-նիներ, որոնցմէ մէկուն վրայ գրուած է «Երեւան», իսկ միւսին վրայ՝ Տերունա-կան աղօթքը: Նաժի ըսաւ, որ տարի-ներ շարունակ կրած է մատանիները, որովհետեւ Զայաստանը իր սրտին մէջ է:

Իսամ Նաժին վաւերագրական ժա-պաւեններ հրապարակած եւ նկարա-հանած է շատ մը երկիրներու մէջ, որոնք թիւին մաս կը կազմեն՝ Իրաքը, Դրագիրը, Զարաւաքին Ափրիկէն, Ռուանտան, Զայաստանը, Ուկրաինան

եւ այլն: Հիմնած է Firsttree.art արտադ-րական ձեռնարկութիւնը, որ արուես-տին առնչուող Նախագիծներ առաջ կը քշէ եւ կը հրապարակուի Մերձաւոր Արեւելքի ու Զիսիսային Ափրիկէի մէջ:

Տեղեկացնենք, որ մառախլապատ Գորիսի մէջ 2020-ի պատերազմէն մէկ տարի ետը սկսած է «Մոռացուած հայրենիք» ժապաւենին նկարահա-նումները: Ժապաւենը կ'ընդգրկէ հայ խիզախ կիներու նկարագրութիւնե-րը՝ Զայաստանի պատմութեան հետ միահիւսուած: «Մոռացուած հայրենի-քը» կը լուսաբանէ Զայաստանի, յատ-կապէս երկրի ամենահարաւային մար-զի՝ Սիւնիքի աշխարհագրական եւ ռազմավարական կարեւորութիւնը, պատմական ու ներկայ մարտահրա-ւերները եւ մշուշտ ապագայ՝ այսպի-սի անկայուն տարածաշրջանի մէջ:

ԱՐՏԱԿ ԲԵԳԼԱՐԵԱՆ...

Շարունակում 4-րդ էջին

«Բնակարանային կարիքները արցախցիներուն մարդասիրական հարցերու շարքին մէջ բաւակա-նին սուր արտայայտուած են, եւ այսօր շատ սպաս-ւած էր եւս 6 ընտանիքի ամուր ծածկով ապահովե-լու իրողութիւնը: Զամոգում չէմ, որ այս նորակա-ռոյց բնակարաններու կողքին պիտի բարձրանան նորերը, եւ «100 տուն Արցախի մէջ» ծրագիրը պի-տի ամրացնէ հայկական Արցախի ներկան ու եր-կարաժամկետ ապագան: Այս ծրագիրը գործնա-կան եւ խորհրդանշական միջոց է Արցախի ապա-գային միտուած հայութեան ջանքերու միատեղ-ման համար, եւ կառավարութիւնը պատրաստ է շարունակ կանգնելու այսպիսի Նախաձեռնութիւն-ներու կողքին», իր խօսքին մէջ նշեց պետական Նա-խարարը:

Արտակ Բեգլարեան գտնուեցաւ Նաեւ շահա-գործման յանձնուած բնակարաններու մէջ եւ անձ-նապէս շնորհաւորեց բոլոր ընտանիքները ու հե-տաքըքրուեցաւ անոնց ընկերային- տնտեսական հարցերով:

Նշուած 6 տուները կառուցուեցան Արցախի կա-ռավարութեան եւ «Ապրելու Արցախ» հիմնադրամի միացեալ դրամական յատկացումով: 6 տուններուն նուիրատուները եղած են՝ Զայաստանի Զանրային հեռուստաընկերութիւնը, Երեւանի քաղաքապե-տարանը, Երեւանի պետական համալսարանը, «Երեմեան փրոճեքց», «Արմսուխպանք» եւ «Տիճի-թէյն» ընկերութիւնները, որոնք այլ նուիրատունե-րու հետ մասնակցեցեան Նաեւ տուներու բակերուն մէջ անասնագութրու կառուցման եւ ընտանիքնե-րու անասնազխիւքացանակի յատկացման:

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԳԱԿԱՆ...

Շարունակում 3-րդ էջին

Թէեւ, իբրեւ հայ, մէկ ազգի կը պատկա-նինք, սակայն իւրաքանչիւր գաղութ իր միջա-վայրին ազդեցութիւնը կը կրէ իր հաւաքական ինքնութեան մէջ: Շարունակելով իր խօսքը՝ կաթողիկոսը աւելցուց. «Մենք սերտօրէն իրարու ազուցուած ենք: Զասարակաց արժեք-ներ ու ասանդութիւններ ունինք, որոնք ոչ միայն մեզ կը միացնեն, այլ Նաեւ մեր ինքնու-թիւնը կ'երաշխաւորեն: Զետեւաբար հարկ է ծայրայեղօրէն ըլլալ զգուշ, որպէսզի մեզ միացնող հասարակաց արժեքները տեղի

չտան միջավայրի արժեքներուն եւ ասանդու-թիւններուն դիմաց»: Վեհափառ հայրապետը ապա սահմանելով զխազիր Աւանդութիւննե-րու եւ փոքրագիր ասանդութիւններու տարբե-րութիւնը՝ նշեց, որ զխազիր Աւանդութիւննե-րէն պէտք չէ հեռանանք, սակայն փոքրագիր ասանդութիւնները կարելի է բարեփոխել եւ պատշաճեցնել ներկայ աշխարհի պայմաննե-րուն: Երբ չենք կըրնար փոխել աւանդութիւն-ները, կը նշանակէ, որ մենք պէտք է փոխ-վինք:

Կաթողիկոսը իր խօսքին մէջ անդրադար-ձաւ Նաեւ սփիւռքի մէջ գաղութաշինութեան եւ համայնքի ազգիպանութեան համար եկեղե-ցի-դպրոց-ակումբ եռանկիւնին հիմնական դե-րակատարութեան: Ան ըսաւ, որ ներկայիս Նոյնիսկ Լիբանանի հայաիւծ շրջանները չեն պահեր իրենց անցեալի դիմագիծը, եւ այս հարցին հարկ է զգուշութեամբ մօտե-նալ, որպէսզի չքանդուին հիմնուած համայնքները: Այս իմաստով ան ար-ժեւորեց նորարարութեան պայման-ներու լոյսին տակ մեր ինքնութիւնը պահելու համար ազգու միջոցներ որոնելը, որովհետեւ եղածը պահելը համահաւասար է մեր ունեցածը

կորսնցնելու: Այս ծիրին մէջ ան ընդձեց ինք-նահասկացողութեան եւ ինքնաշինարկումի անյետաձգելի անհրաժեշտութիւնը:

Լուսաբանի տակ առնելով երիտասար-դին հաւաքական կեանքի մասնակցութիւնը՝ Արամ Ա. յայտնեց, որ հոն Նահանջ կայ, եւ այս մէկը իր անդրադարձը կ'ունենայ հաւաքական պատկանելիութեան վրայ: Ան քաջախեցեց երիտասարդները ունենալու եղափոխելու եւ, ինչո՞ւ չէ, Նաեւ, ի պահանջել հարկին, յեղա-փոխելու հաւաքական կամքը, որպէսզի լոյլ լոգունգներու սահմաններուն մէջ չմնայ հաւ-աքական կեանքի բարեփոխութիւնը, որ առա-ջին հերթին կը սկսի անհատական մակարդա-կի վրայ:

Իր խօսքի աւարտին վեհափառը Նաեւ լսեց երիտասարդներուն մտահոգութիւնները եւ պատասխանեց անոնց հարցումներուն, որոնք առաւելաբար առնչուած էին երկրին ընկերատնտեսական տագնապի պատճա-ռով գաղութի երիտասարդ տարրերուն ար-տագաղթին, գաղութին Նօսրացման, լիբանա-նահայ համայնքի կշիռի երկրին մէջ, երիտա-սարդներու գործի եւ ուսանողութեան առիթ-ներ ստեղծելու եւ մեր ազգային կեանքին մէջ եկեղեցւոյ դերակատարութեան:

ԲԱՐՍԵՂ...

Շարունակում 3-րդ էջին

Բարսեղ Կանաչեան՝ թրքական բա-նակի գիւտուր եւ հիւանդանոցի մէջ հի-ւանդապահ: 1918 դաշնակից յաղթա-կան բանակները կը մտնեն Պաղեստին, Սուրիա, Զալէա: Կանաչեան Զալէա է եւ կը կազմակերպէ համերգներ՝ ի գար-մանս Դաշնակից բանակի սպաներուն: Զայ ժողովուրդը մոխիրներէն յարութիւն կ'առնէ:

Յաջորդ տարիներուն Կանաչեան կը շրջի զանազան երկիրներ՝ Եգիպտոս, Կիպրոս, Պոլիս, Ռոյապա:

1926-ին Կիպրոսի մէջ ան ԶԲԸ-ի Մեղզոնեան կրթական հաստատութեան երաժշտութեան ուսուցիչ է եօթը տարի-ներ, Նոյն ատեն կը կազմակերպէ հա-մերգներ:

Բարսեղ Կանաչեան կ'ամուսնանայ երկու անգամ, առաջինը 1924-ին՝ Զնա-րիկ Տեր Սարգիսեանին հետ, որմէ կ'ու-նենայ երկու դուստրեր՝ Սեղան եւ Այ-տան: Զնարիկը հիւանդութեան պատ-ճառով կը մահանայ: Կանաչեան երկ-րորդ անգամ կ'ամուսնանայ այս ան-գամ Զրիսթինէ Գալֆայեանին հետ 1931-ին, կ'ունենայ մէկ դուստր՝ Ռիթան:

1933-ին Բարսեղ Կանաչեան կը հաս-տատուի իր վերջնական կայանը՝ Լիբա-նան, Պէլլուր: Կը հիմնուի Զամազգայի-նի «Գուսան» երգչախումբը՝ ղեկավա-րութեամբ Արսեղ Կանաչեանի: Զա-մերգներ կը կազմակերպուին Պէլլուր, Թրիփոլի, Չաիւլէ, Դամասկոս, Զալէա: Կը կազմուի «Գուսան» երգչախումբի միութիւն՝ Զամազգայինի Նախաձեռնու-թեամբ, թեթեւցնելու համար Կանաչեա-նի նիւթական եւ բարոյական ծանրա-բեռնութիւնը: Ան կը մահանայ 1967-ին եւ կը թաղուի Պէլլուրի Փըրն Շըպէե ազ-գային գերեզմանատունը:

Ապա հանդիսավարը խօսքը կը փո-խանցէ օրուան բանախօս երաժիշտ Չաքար Բէշիշեանին, որուն չորրորդ դա-սախօսութիւնն էր «Մեծարնեցեան երե-կոներ»-ու՝ Կոմիտասէն, Ջիւանիէն ու Արամ Խաչատուրեանէն ետը:

Չաքար Բէշիշեան իր խօսքին սկիզ-

ԺԱՄԱՆՅ

ԽԱՉԲԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

ԳՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- Արեւու մոլորա կներեն - Աղբիւր:
- Արական անուն - Պակաս ւոր:
- Կրկնուած բաղաձայններ - Պալատ:
- Աշտանակ - Յափ ճիւղ:
- Իշպական անուն - Նուազարանի լար - Զաստատական պատասխան:
- Նոյն գիրերը - Իգական օտար անուն - Ստացական ածական:
- Սոլորմի բախտակից քաղաքներն - Ստեփան Շահապալի ծնողական յոր:
- Չաւա կը կրկնուցանէ:
- Իշպական օտար անուն:
- Նուրբ պիւր - Այբութենէ - Լծորդութիւն:
- Այսինքն - Կալողանալ, ժամանակ գտնել:

ՈՐԴԱԿԱՅԱՅ

- Կոճակի օղակ - Շաղկաբեր հացի:
- Պատի վրայ գծապըրած նկար - Տարի:
- Իրեքայջորդ տառեր - Որովհետեւ - Կրկնուած գիրեր - Այբութենէ:
- Թալլենտի Նախկին անունը - Կատաղի:
- Կրճող անասուն - Ռամբրենտ՝ այր:
- Պալլանեան պատմական մալուկ մը - Աճական կերտ մասնիկ:
- Հոյլ - Մովսէս Յարութիւնեանի գրչանունը:
- Ողորմիլ - Գլուխը կախ՝ կախող եւ:
- Եական բայ - Զայաստանի լեռներն:
- Թալար - Բազմիկ:
- Արական օտար անուն - Մտածե՛լ - Նաեւ:

Պատրաստեց՝ Տ. Մ. ԱՐԱՋԱՐԵԱՆ

ՍՈՒՏՈՔՈՒ

	8		2		7
			8		
	4	1			9
			4	2	8
	9				
					3
	2	1	9		
	1	6		2	9
				5	
	7		9		4

Հորիզոնական եւ ուղղահայեաց թ շարքերով եւ սիւնակներով (ՑԽԹ) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը թ ջառակուսի հաշտող թ բաժինների (ՑԽԹ): Բացառումի սկզբունքին կիրառումով իւրաքանչիւր ջառակուսիի մէջ թուանշումը գետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ թ ջառակուսիից իւրաքանչիւր բաժին ունենայ ձեւ թ թուանշումները՝ իւրաքանչիւր թուանշում միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով՝ ոչ մէկ պարագայի արտուումն է թուանշում մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Այսպէս համար՝ կարգ մը թուանշումներ իրենց ճշգրիտ ջառակուսիներուն մէջ գետեղուած են:

ՆԱԽՈՐԳ ԺԱՄԱՆՅԻ ՆԱԳԵՐՈՒՆ ՆՈՒՇՈՒՄՆԵՐԸ

	ԿԱՅԲԱԳ	ՍԱՐՏԱՔԻ
	1 2 3 4 5 6 7 8 9 10 11	7 1 3 5 6 8 4 8 2
1	8 9 10 11 12 13 14 15 16 17 18	6 5 2 4 8 7 1 3 9
2	9 10 11 12 13 14 15 16 17 18 19	4 8 9 2 3 1 6 5 7
3	10 11 12 13 14 15 16 17 18 19 20	9 6 8 7 4 5 3 2 1
4	11 12 13 14 15 16 17 18 19 20 21	5 3 4 6 1 2 9 7 8
5	12 13 14 15 16 17 18 19 20 21 22	2 7 1 8 9 3 5 6 4
6	13 14 15 16 17 18 19 20 21 22 23	1 9 5 3 2 8 7 4 6
7	14 15 16 17 18 19 20 21 22 23 24	8 4 7 9 5 6 2 1 3
8	15 16 17 18 19 20 21 22 23 24 25	3 2 6 1 7 4 8 9 5
9	16 17 18 19 20 21 22 23 24 25 26	
10	17 18 19 20 21 22 23 24 25 26 27	
11	18 19 20 21 22 23 24 25 26 27 28	

ԱԹԼԵԹԻԶՄ

ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԵՑԱՆ ՀԻՆԳ ՆՈՐ ՄՐՅԱՆԻՇԵՐ



Կազմակերպությամբ Լիբանանի աթլետիկայի ֆեդերասիոնին, Նախորդ շաբաթավերջին երեք օրվա տեղումնական վրայ, Քամիլ Շամունի անուն Մարզական ամառիկի և Ժամհուր վարժարանի մեջ տեղի ունեցան Լիբանանի աթլետիկայի տղոց և աղջկանց 2022 տարեշրջանի անհատական ախոյեանությունները:

Լիբանանի աթլետիկայի ֆեդերասիոնը ախոյեանության ավարտին ետք յայտարարեց, որ տեղական հինգ մրցանիշեր հաստատուեցան տարբեր տեսակի մրցումներում ընթացքին:

Ախոյեանության ավարտին տեղի ունեցավ բոլոր մրցանակակիր մարզիկներուն մրցանակաբաշխությունը՝ Լիբանանի աթլետիկայի ֆեդերասիոնին նախագահ Ռոլան Սաատիի և այլ անդամներու ներկայությամբ:

«ՖՈՐՄԱԿԱ-1»

ՖԵՐՆԱՆՏՕ ԱԼՈՆՍՕ ՊԻՏԻ ՓՈԽԱՐԻՆԵ ՍԵՊԱՍԹԻԱՆ ՎԵԹԵԼԸ



«Ֆորմուլա-1»-ի աշխարհի կրկնակի ախոյեան Ֆերնանտո Ալոնսո յառաջիկայ տարուհն սկսեալ ելոյթ պիտի ունենայ Ասթոն Մարթին խումբին հետ, այս մասին յայտնեց վերջինիս մամուլային քարտուղարությունը:

Կողմերը իրարու հետ կնքեցին երկարաժամկետ պայմանագրություն մը, որուն մասը մասնաճանաչումները չիրապարկուեցան:

Անգլիական խումբին հետ սպանացի վարորդը պիտի ըլլայ «Ֆորմուլա-1»-ի բառակի ախոյեան, գերմանացի Սեպասթիան Վերթեյլ փոխարինողը: Վերթեյլ յայտարարած էր, թէ այս տարեշրջանին ավարտին վերջ մը պիտի դնէ իր արհեստավարժ ասպարեզին:

Նշենք որ 41 տարեկան Ալոնսո 2020-էն ի վեր ելոյթ կ'ունենայ Ռեյնոլդի հետ:

ՍԵՍԲ ՖԱՊՐԵԿԱՍ ՈՒՆԵՑԱԻ ԻՐ ՆՈՐ ԱԿՈՒՄԲԸ



Մոնաքոյէն հեռացած սպանացի 35 տարեկան միջնապահ Սեսթ Գապրելաս, իբրեւ ազատ ֆուլպայիստ, միացաւ իտալական Զոմօ ֆուլպայի ակումբին, որ իր մասնակցութիւնը կը բերէ Իտալիոյ ֆուլպայի Բ. դասակարգի ախոյեանութեան:

Սպանացի ֆուլպայիստը եւ իտալական ակումբը իրարու հետ կնքեցին երկու տարուան պայմանագրութիւն մը, որ իր ավարտին կը հասնի 30 յունիս 2024-ին:

Պարսեւոնայէն բացի ան մաս կազմած է Նաեւ Արսենալին եւ Չելսիին:

Իտալիոյ ֆուլպայի Բ. դասակարգի ախոյեանութեան մենկարկը կը տրուի 12 օգոստոսին, մինչ անոր նոր ակումբին առաջին մրցակիցը պիտի ըլլայ Զալիարի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՂՈՑ ՀԱՒԱՔԱԿԱՆԻՆ ՅԱԶՈՐԳԱԿԱՆ 5-ՐԴ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Հնդկաստանի Շենայ քաղաքին մէջ շարունակուող Համաշխարհային Օլիմպիատի 5-րդ հասկարուանի մրցումներուն ծիրին մէջ, երէկ Հայաստանի տղոց հաւաքականը, որ մրցեցաւ Անգլիոյ դէմ, արձանագրեց իր 5-րդ յաջորդական յաղթանակը՝ 2,5-1,5 արդիւնքով:

Գաբրիէլ Սարգսեան հաւասարութիւն մը արձանագրեց Մայքըլ Էտըմսի հետ:

Իրենց կարգին, հաւասարութիւններ արձանագրեցին Նաեւ Սամուէլ Տըր Սահակեան եւ Ռոպերթ Յովհաննիսեան:

Հայաստանի յաղթական կէտը ապահովեց Հրանտ Մելքումեան, որ իր յաղթանակը արձանագրեց ճերմակ քարերով:

Իր արձանագրած այս յաղթանակին շնորհիւ, Հայաստան այժմ 10 կէտով Հնդկաստանի երկրորդ խումբին հետ կը բաժնէ առաջին դիրքը:



Ինչ կը վերաբերի Հայաստանի աղջկանց հաւաքականին, որ այս հանգրուանին մրցեցաւ Իստոնեզիոյ դէմ, արձանագրեց 3-1 արդիւնքով յաղթանակ մը:

Աննա Սարգսեան եւ Մարիամ Մկրտչեան յաղթանակներ արձանագրեցին, մինչ Էլինա Դանիէլեան եւ Լիլիթ Մկրտչեան՝ հաւասարութիւններ:

Հայաստանի աղջիկները այժմ 8 կէտով կը բաժնեն 7-17-րդ դիրքերը:

ՖԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԵՆ ԵՐԵՔԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԻՐԻՆ ՄԷՋ

Ճատրակի միջազգային ֆեդերասիոնին՝ ՖԻՏԵ-ին կողմէ հրապարակուած օգոստոս ամսուան Նոր դասարտման մէջ, Հայաստան ունի երեքական ներկայացուցիչ՝ առաջին հարիւրին մէջ:

Տղոց պարագային, առաջին հարիւրին մէջ են Գաբրիէլ Սարգսեան (40-րդ), Հայկ Մարտիրոսեան (82-րդ) եւ Շանթ Սարգսեան (90-րդ):

Իսկ աղջկանց պարագային, առաջին հարիւրին մէջ են Էլինա Դանիէլեան (30-րդ), Աննա Սարգսեան (74-րդ) եւ Լիլիթ Մկրտչեան (95-րդ):

Նորվեկիացի Մակնու Քարլսըն կը մնայ առաջին, մինչ Միացեալ Նահանգներու դրօշին տակ Խանդե Եկոլ Լեոն Արոնեան կը գրաւէ 6-րդ դիրքը:



ԵՐԻԿ ՎԱՐԳԱՆԵԱՆ ԴԱՐՉԵԱԼ ԵՆԹԱՐԿՈՒԵՑԱԻ ԾՈՒՆԿԻ ՎԻՐԱՔՈՒԺՈՒԹԵԱՆ

Ուրարտուի միջնապահ Երիկ Վարդանեան դարձեալ ենթարկուեցաւ ծունկի վիրաբուժութեան, այս մասին յայտնեց հայկական ակումբին մամուլային քարտուղարութիւնը:

Ուրարտուի բժշկական կազմը յայտնեց, որ Վարդանեանի ամբողջական ապաքինման համար կը պահանջուի 3 ամիս:

Նշենք, որ ան Նախորդ տարեշրջանի ավարտին առաջ իր ստացած վնասուածքին պատճառով դարձեալ ենթարկուած էր յաջող վիրաբուժութեան եւ այդ իսկ պատճառով բացակայած՝ իր կազմին կատարած տարեշրջանի վերջին քանի մը մրցումներէն:



ՄԱՐՄԱՍԱՐԶՈՒԹԻՆ. ԵՐՈՊԱՅԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՆ

ՀՐԱՊԱՐԱԿՈՒԵՑԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՒԱՔԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԿԱԶՄԵՐԸ

15-21 օգոստոսին գերմանական Միւնխի քաղաքին մէջ տեղի պիտի ունենայ Եւրոպայի մարմնամարզութեան ախոյեանութիւնը:

Հայաստանի մարմնամարզութեան ֆեդերասիոնին մամուլային քարտուղարութիւնը հրապարակեց այն մարզիկներուն անունները, որոնք իրենց մասնակցութիւնը պիտի բերեն իր կատարելից մեծերու եւ երիտասարդական ախոյեանութեան:

Մեծերու ախոյեանութեան պիտի մասնակցին Արթուր Դաւթեան, Վահագն Դաւթեան, Յարութիւն Մերդինեան, Արթուր Աւետիսեան եւ Գագիկ Խաչիկեան՝ իրենց մարզիչ ունենալով Հայկ Նազարեանը եւ Նշուր Գասպարեանը:

Իսկ երիտասարդներու ախոյեանութեան պիտի մասնակցին Համլէթ Մանուկեան, Մամիկոն Խաչատրեան եւ Երիկ Բաղդասարեան՝ իրենց մարզիչ ունենալով Արտակ Արդիւնեանը:

Նշենք, որ այս ախոյեանութեան լաւագէտ պատրաստուելու համար, երկու հաւաքականները Նախորդ ամսեկներին սկսան ուսումնամարզական հաւաքի մը՝ Թիֆլիսի մէջ: Հաւաքը պիտի ավարտի 14 օգոստոսին:



ԱՐՄՈՆ ՌԵՄՍԻ-ԵՈՒՎԵՆԹՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԽՁՈՒՄ

Եուվենթուսի մամուլային քարտուղարութիւնը յայտնեց, որ ակումբը երկրորդականի համաձայնութեամբ մը պայմանագրութիւնը խզեց Արմոն Ռեմսիի հետ:

Կողմերուն միջեւ համաձայնագիրը Նախատեսուած էր մինչեւ 2023:

Նշենք, որ ան յունուար 2022-ին փոխ տրուած էր սկոթլանդական Ռեյնքըրգին:

31 տարեկան ֆուլպայիստը, որ 2019-էն ի վեր ելոյթ կ'ունենայ Եուվենթուսի հետ, 69 մրցումի ընթացքին Նշանակեց 6 կոլ եւ կատարեց Նոյնքան Էփիսթ:

Երէկ յստակացաւ, որ ֆուլպայիստը միացաւ Ֆրանսայի ֆուլպայի Ա. դասակարգին մէջ հանդէս եկող Նիսին՝ իբրեւ ազատ ֆուլպայիստ:



«ՉԵՍՓԻԸՆԶ ԼԻԿ»

ԱՅՍՕՐ՝ «ԿԱՐՄԻՐ ԱՍՏՂ» ՊԵԼԿՐԱՏ-ՓԻՒՆԻԿ ԵՐԵՒԱՆ



Հայաստանի ֆուլպայի ախոյեան Փիւնիկ Երեւան, «Չեսփիընզ Լիկ»-ի ֆուլպայի մրցաշարքին զտումի Գ. հանգրուանի երթի մրցումներուն ծիրին մէջ, այսօր՝ չորեքշաբթի, 3 օգոստոսին բաւական կարեւոր եւ քիչ մը դժուար մրցում մը ունի կատարելիք, երբ Սերպիոյ մէջ մրցի «Կարմիր աստղ» Պելկրատի դէմ:

Երթի այս մրցումին ազդանշանը պիտի տրուի ժամը 21:45-ին՝ Պելկրատի ժամանակացոյցով:

Կեդրոնի, կողմի եւ չորրորդ իրաւարարները պիտի ըլլան Փորթուգալէն:

Երկու կազմերուն միջեւ դարձի մրցումը տեղի պիտի ունենայ 9 օգոստոսին, Երեւանի Վազգէն Սարգսեանի անուն հանրապետական մարզադաշտին վրայ, մինչ անոր մենկարկը պիտի տրուի ժամը 21:00-ին՝ Երեւանի ժամանակացոյցով:

ՉԱԷՆ ԲԱԴՈՅԵԱՆ ԻՐ ԱՌԱՋԻՆ ԿՈԼԸ ՆՇԱՆԱԿԵՑ ՂԱԶԱԽՍԱՆԻ ՄԷՋ



Հայաստանի ֆուլպայի ազգային հաւաքականի Նախկին միջնապահ Չաւեն Բադոյեան, որ մաս կը կազմէ ղազախական Աքթաիքին, յաջողեցաւ Նշանակել իր առաջին կոլը, երբ Ղազախստանի ֆուլպայի բաժակի մրցաշարքին ծիրին մէջ, անոր կազմը արձանագրեց 2-0 արդիւնքով յաղթանակ մը՝ Զիլդիլ ժարիի դէմ:

58-րդ վայրկեանին դաշտ ներկայացած Բադոյեան, մրցումին ավարտին քանի մը վայրկեան առաջ Նշանակեց իր կազմին երկրորդ կոլը:

32 տարեկան Բադոյեան, որ Նախապէս մաս կը կազմէր Չարենցաւանի Վանին, Նախորդ 12 ապրիլին իբրեւ ազատ ֆուլպայիստ միացաւ Աքթաիքին:

ՇՈՒՄԱԽԸՐԻ ԻՆՔՆԱՇԱՐԺԸ ՀԱՆՈՒԵՑԱԻ ԱՃՈՒՐԴԻ



Միջազգային մարզական մամուլէն կը տեղեկանանք, որ «Ֆեռարի-ԷՖ.-300»-ը, որ գերմանացի վարորդ Միքայէլ Շումախերի ինքնաշարժն էր 1998-ին, հանուած է աճուրդի:

Եօթը անգամ աշխարհի ախոյեան հանդիսացած Շումախըր այդ ինքնաշարժով չորս տարեշրջանի ընթացքին հանդիսացած էր ախոյեան:

Ըստ շրջան ընտր լուրերուն, շատ հաւանական է, որ անոր այդ ինքնաշարժը ծախուի 5-6,5 միլիոն սթերլինկի:

«Մոթոր Սփոր Մակազին» կը յայտնէ, որ Շումախըր այդ ինքնաշարժը 1999-ին ծախած էր:

18-20 օգոստոսին Մոնթրէյի մէջ (Զալիֆորնիա, Միացեալ Նահանգներ) տեղի պիտի ունենայ այդ ինքնաշարժին աճուրդը:

ՔԱՅԻՏԱՅԻ ՂԵԿԱՎԱՐ...

Շարունակուած Ա. Էջէն

«Չառուահիրին մեղսակից Է 11 սեպտեմբեր 2001-ի յարձակումներուն ծրագրման, եւ որքան ալ ուշ ըլլայ, Միացեալ Նահանգներուն սպառնացողը պիտի գտնեք ու սպաննեք», ընդգծեց Սպիտակ տան ղեկավարը:

«Չառուահիրին սպաննեցինք Աֆղանիստանի մէջ, արդարութիւն գործուեցաւ, եւ գործողութիւնը յաջողութեամբ գործադրեցինք», աւելցուց Պաշտըն՝ յոյս յայտնելով, որ անոր սպանութիւնը 11 սեպտեմբեր 2001-ի զոհերու ընտանիքներուն կ'արտօնէ «Էջը փակելու»:

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Էնթընի Պլինքըն իր կարգին մեկնաբանեց Չառուահիրիի սպանութիւնը՝ ըսելով, որ Թալեպան շարժումը Բայիտա կազմակերպութեան ղեկավար Այման Չառուահիրին հիւրընկալելով եւ անոր ապաստան տալով «բացայայտ կերպով խախտեց» Տոհայի համաձայնութիւնը:

Ամերիկացի 2 պաշտօնատարներ «Ռիթըրզ» լրատու գործակալութեան յայտնեցին, որ անօդաչու թռչող սարքով յարձակումը գործուած է «Սի.Այ.Էյ.»-ի կողմէ:

Կիրակի կանուխ առաւօտուն Աֆղանիստանի մայրաքաղաք Քապուլի մէջ ուժեղ պայթում մը լսուեցաւ: Աֆղանիստանի ներքին գործոց նախարարութեան բանբեր Նաֆէի Թաքուր յայտնեց. «Շիրակուրի մէջ բնակարանի մը վրայ հրթիռ մը ինկաւ: Մարդկային վնասներ չարձանագրուեցան, որովհետեւ տունը բնակուած չէր»:

Չառուահիրիի սպանութիւնը 2011-ին Ուսամա պըն Լատենի սպանութենէն ի վեր Բայիտային հասած մեծագոյն հարուածը կը նկատուի: Նշենք, որ Փաքիստանի մէջ պըն Լատենի սպանութենէն ետք, անոր տեղակալ Չառուահիրին դարձած էր Բայիտա ահաբեկչական կազմակերպութեան ղեկավարը:

ՏԱՆՖՐԻՏ ՀԵՌԱՉԱՅՆԱՅԻՆ ...

Շարունակուած Ա. Էջէն

«Նախարար Ճէյիուն Պայրամով ամերիկեան կողմին ներկայացուցած է Ազրպէյճանի յայտնի դիրքորոշումը շրջանին մէջ խաղաղութեան եւ յառաջընթացի անհրաժեշտութեան մասին, ներառեալ փոխարքամիջոցային հաղորդակցութիւններու բացման, երկու պետութիւններու սահմաններու սահմանազատման, ապագայ խաղաղութեան համաձայնագիրի շուրջ աշխատանքներու մենարին մասին», կը Նշուի Ազրպէյճանի արտաքին գործոց նախարարութեան հաղորդագրութեան մէջ:

Ըստ աղբիւրին, Ազրպէյճանի դիւանագիտութեան ղեկավարը կարելոր նկատած է կողմերու ստանձնած պարտաւորութիւններու կատարումը՝ պնդելով, որ ի հեճուկս ստանձնած պարտաւորութիւններուն, «Յայաստան իր զինեալ ուժերը ամբողջութեամբ դուրս չէ բերած Ազրպէյճանի տարածքէն»:

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարի երուպական եւ եւրասիական հարցերով տեղակալը Նոյն օրը հեռաձայնային հաղորդակցութիւն ունեցած է Յայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյեանի հետ: Հայկական կողմին հաղորդումով՝ կողմերը բնարկած են շրջանին մէջ գոյութիւն ունեցող անվտանգային միջավայրը, Յայաստանի եւ Ազրպէյճանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման, Լեռնային Ղարաբաղի տագնապին վերաբերող հարցեր: Անդրադրանալով 44-օրեայ պատերազմին հետեւեանքով ծագած մարդասիրական խնդիրներու լուծման՝ կողմերը ընդգծած են հայ պատերազմական գերիներու եւ այլ պահուող անձերու շուտափոյթ ազատ արձակման անհրաժեշտութիւնը:

Յայաստանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանատունը յայտնեց, որ Տննֆրիտ հեռաձայնային հաղորդակցութիւն ունեցած է Միրզոյեանի եւ Պայրամովի հետ:

Հաղորդագրութեան մէջ նաեւ կը Նշուի. «Անոնք բնարկած են շրջանին մէջ խաղաղութիւն հաստատելու հարցին մէջ Յայաստանին եւ Ազրպէյճանին ընձեռնած պատմական կարելիութիւնը: Արտաքին գործոց փոխնախարարը վերահաստատած է շրջանային փոխարքամիջոցային եւ հաղորդակցութեան ուղիներու բացման աջակցելու Միացեալ Նահանգներու առաջարկը: Ան կողմերուն կոչ ուղղած է մեղմացնելու սահմաններու լարուածութիւնն ու խրախուսած երկխօսութեան շարունակութիւնը»:

«ԼԻՔԱՆԱՆ ՊԻՏԻ ԻՐԱՎԱՆԱՅԻՆ ...»

Շարունակուած 2-րդ էջէն

Շարաֆէտտին յայտնեց, որ ինք տեղահանուածներու հարցերով ՄԱԿ-ի գերատեսչութեան պատասխանատու Իյաքի Այոյին առաջարկած է, որ Նուիրատու երկիրները սուրիացի տեղահանուածներուն նիւթական նպաստը տրամադրեն Սուրիոյ մէջ, սակայն Այթթ կտրականապէս մերժած է այդ առաջարկը: Ան աւելցուց, որ այդ մերժումին պատճառը քաղաքական է:

Շարաֆէտտին նկատել տուաւ, որ ինք միջազգային միտում չօշափած է՝ քաղաքական նպատակներու համար սուրիացի տեղահանուածները Լիբանանի մէջ պահելու:

Ան յայտնեց, որ կան քաղաքական թղթածրարներ, որոնք կը շահագործուին՝ աւելցնելով, որ Պրիւքսելի մէջ տեղահանուածները լիբանանցի քաղաքացիներուն հետ համարկելու առաջարկ ներկայացուած է, ինչպէս նաեւ Լիբանանին տրամադրուելիք հսկայական գումարներու մասին խօսուած է, սակայն ընկերային հարցերու նախարարութիւնը կտրականապէս մերժած է այդ առաջարկը:

ՉԱՌՈՒՇՈՂԼՈՒ «ԿՆՋԱԿՅԻՆՔ...»

Շարունակուած Ա. Էջէն

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարին համաձայն, ուքրանական ճգնաժամի լոյսին տակ մեծցած է «Միջին միջանցքի» դերը, որուն օգտագործումը պիտի նպաստէ պետութիւններու զարգացման, որոնց տարածքէն կ'անցնի անիկա:

«Փոխարքամիջոցային Միջին միջանցքի ծիրին մէջ Թուրքիան եւ Ազրպէյճանը իրականացուցած են Պաքու-Թիֆլիս-Կարս երկաթուղային ծրագիրը: Հաշի առնելով, որ աշխարհի վրայ առետուրի հիմնական մասը կը կատարուի Եւրոպայի եւ Ասիոյ միջեւ՝ տարեկան շուրջ 1,5 եռիլիոն տոլար, ապա այդ միջանցքին աճող նշանակութիւնը ակնյայտ է», ըսած է Չառուշօղլու՝ ընդգծելով Հարաւային Կովկասի մէջ բոլոր գումակային ուղիները բանալու անհրաժեշտութիւնը:

«ՁԱՆԳԵԶՈՒՐԻ ՄԻՋԱՆՅՔԻՆ ... »

Շարունակուած Ա. Էջէն

Ասիկա անվտանգ, կայուն ու բարգաւաճ Հարաւային Կովկասի եւ լիարժեք շրջանային համագործակցութեան կառուցման բանալին է: Այս հարցին մէջ Ազըրպէյճանի դիրքորոշումը սկզբունքային է եւ կայուն», «Ինթըրֆաքս»-ի հաղորդումով՝ երեկ այս մասին ըսած է Պայրամով Թաշքենտի մէջ Ազրպէյճանի, Ուզպէքիստանի եւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարներու միացեալ մամլոյ ասուլիսին ընթացքին:

Նախարարը վստահութիւն յայտնած է, որ փոխարքամիջոցային հաղորդակցութիւններու բացումը օգուտ պիտի բերէ շրջանի բոլոր երկիրներուն:

«Վստահ եմք, որ Ազրպէյճանի ազատագրուած տարածքներու վերածնունդը, շրջանին մէջ բոլոր հաղորդակցութիւններու բացումը, ներառեալ Չանգեզուրի միջանցքին գործարկումը, պիտի ծառայեն միջազգային փոխարքամիջոցային կապերու ընդլայնման՝ աւտով իսկ նպաստելով շրջանին մէջ խաղաղութեան եւ յառաջընթացի հետագայ ամրապնդման», ընդգծած է ան:

ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ԿԱՐԸ ԼՈՒՐԵՐ

Շարունակուած 2-րդ էջէն

●ՈՒԺԱՆԻԹԻ Եւ ջուրի հարցերու նախարարութիւնը երեկ հրապարակեց վառէտնիւթ Նոր սակացոյցը, որուն համաձայն՝ 95 եւ 98 օքթան պենզինի սակը 11.000 լ. ոսկիով նուազեցաւ: Հետեւաբար 95 օքթան պենզինի թիրեղին սակը է 581.000 լ. ոսկի, 98 օքթան պենզինի թիրեղին սակը՝ 593.000 լ. ոսկի, մագուլը՝ 649.000 լ. ոսկի, իսկ պիւթակազը՝ 314.000 լ. ոսկի:

ԿՈՒՋՈՒԻ

Խ ո հ ա ն ց ի
մէջ աշխատող
հայ կիներ:

Հայկական եւ
արաբական ճաշերու պատրաստութեան փորձառու եւ հմուտ
ըլլալը՝ պայման:
Հեռ. 81-290488:

●ՆԱԽԿԻՆ Նախարար Միշել Սմահա ազատ արձակուեցաւ. անոր պաշտօնի փաստաթան Սախըր Հաշեմ հաստատեց, որ Սմահա իր բնակարանին մէջ է եւ առողջական լաւ վիճակով:

●ՆԱԽԿԻՆ Նախարար Մոհամետ Ֆընէշ հաստատեց, որ ամերիկացիին դերակատարութեան նկատմամբ վըստահութիւն չկայ՝ աւելցնելով, որ Լիբանան իր իրաւունքին իր ձեռքով պիտի տիրանայ:



ԱՅՍՈՐ՝ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»-ԷՆ
Radio Voice of Van - Վանայ Զայն FM: 94.7 Եւ 95 MHz

7.00 Զայերգներ / Առաւօտ լուսոյ

7.05 Բարի լոյս

7.30 Երկու բարեւ

8.30 Լուրեր

9.00 Երկու բարեւ

9.30 Բարեւ

10.00 Խանդավառ երգեր

10.30 Հայկական աշխարհի լուրեր (ուղիղ՝ դիմատեսքով)

10.45 Երգային քաղաքականութիւն

11.00 Թանկոյի ոճով երգեր եւ եղանակներ

11.30 Նոր երգեր

12.30 Ռատիօ-թատրոն

1.00 Ազգային-հայրենասիրական երգեր

1.30 Լուրեր

2.00 Յիշատակելիները (Արցախեան Նորօրէյտ հերոսներ)

2.05 Յեղափոխական երգեր

3.00 Զըլ եոմ պիյումու. հիւր՝ Ամին Նասըր (**ուղիղ դիմատեսքով**)

4:00 Ամբատներ (նիւթ) «Սասունի յաւերժ ուխտաւորը»)

4.30 Սփիւռքեան խանդավառ երգեր

5.00 «Վանայ ձայնը» երեկոյեան

5.05 «Սկաւտին ձայնը»

6.00 Հայրենի խանդավառ երգեր

6.30 Լուրեր

6.50 «Երգ-երգոց»-ի կատարումներ

7.00 «Կենաց ծառ» (Մովսէս Ծիրանիի հետ)

7.30 Հեղինակային երգեր

8.00 Օրուան երգիչ (Յովսէփ Կոմիտաս)

8.30 Չուգերգներ

9.00 Լիբանանահայ երգիչներու կատարումներ

9.30 Հայկական աշխարհի լուրեր (կրկ.)

9.45 Պրքիս հետ

11.00 Golden Oldies

12.00 Յիշատակելիները/Յեղափոխական երգեր

2.00 Եսդրատային երգեր

3.00 Կրկնութիւններ

5.00 Հայերէն այլազան երգեր

6.00 Հայկական երաժշտութիւն

Զոր մնայուն ընկերակիցը

Radio Voice of Van:Live

DOWNLOAD







ՓԵԼՈՍԻ ԹԱՅՈՒԱՆ Կ'ԱՅՑՑԵԼԷ

Շարունակուած Ա. Էջէն

Չինաստանի արտաքին գործոց նախարարութիւնը Միացեալ Նահանգներուն կոչ ուղղեց՝ «Չինաստանը վերահսկողութեան տակ առնելու համար Թայուանի խաղաքարտը չխաղալու»:

«Ամերիկեան այցելութիւնը Թայուանի անկախութեան ձգտող անջատողական ուժերուն սխալ նշաններ կը փոխանցէ», Նշեց նախարարութիւնը՝ ընդգծելով, որ Ուաշինկթըն եւ Թայվէ «սադրանքներ» կատարած են, եւ Չինաստանը «ստիպւած է ինքզինք պաշտպանելու համար գործելու»:

«Արապիա» հաղորդեց, որ չինական իշխանութիւնները յայտարարած են. «Թայուանի օդային տարածքը փակուած է քաղաքային օդանւերու համար, եւ այն օդանւերը, որոնք պիտի խախտեն Թայուանի օդային տարածքին դէմ հաստատուած թռիչքի արգելքը կրնար վար առնուիլ»:

«Ժազիրա», յղում կատարելով Չինաստանի պաշտպանութեան նախարարութեան, հաղորդեց. «Չինտրական որոշ գործողութիւններու պիտի սկսիւնք՝ հակադարձելով Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչ-

ներու տան նախագահ Նենսի Փելոսիի Թայուան այցելութեան»:

Չինաստանի արտաքին գործոց նախարարութեան բանբեր Չժաօ Լիցզիան քանի մը օր առաջ յայտարարած էր. «Չինաստանի իշխանութիւնները արդիւնաւետ ուժ պիտի կիրարկեն Միացեալ Նահանգներու Զնկրեսի Ներկայացուցիչներու տան նախագահ Նենսի Փելոսիի Թայուան այցելութեան պարագային»:

«Եթէ Փելոսին այցելէ Թայուան, ատիկա կոպիտ միջամտութիւն պիտի ըլլայ Չինաստանի ներքին քաղաքականութեան... Եւ պիտի յանգեցնէ շատ լուրջ հետեւանքներու: Չինաստանի բանակը ձեռքերը ծալած պիտի չնստի», ընդգծած էր ան մամլոյ ասուլիսի ընթացքին:

Դիւանագետին կարծիքով՝ Փելոսիի Թայուան այցելութիւնը պիտի ապակայունացնէ Թայուանի ներուցին մէջ տիրող կացութիւնը եւ հարուած հասցնէ Չինաստան-Միացեալ Նահանգներ յարաբերութիւններուն:

«Չինաստան անպայման պիտի ձեռնարկէ ուժեղ եւ արդիւնաւետ հակաքայլերու», ըսած էր Չժաօ Լիցզիան:

ԼԱՐՈՒՎԾՈՒԹԻՒՆԸ ՇՓՄԱՆ ...

Շարունակուած Ա. Էջէն

Ըստ աղբիւրին, օրակարգային յաջորդ հարցը կը վերաբերէր Արցախի Հանրապետութիւնը Հայաստանի Հանրապետութեան հետ կապող միջանցքին: Ազրպէյճանական կողմը Արցախի մէջ տեղակայուած խաղաղապահ զօրակազմին միջոցով պահանջ ներկայացուցած է յառաջիկային երթելելութիւնը Նոր Երթուղիով կազմակերպելու

վերաբերեալ:

Կը Նշուի, որ Անվտանգութեան խորհուրդի Նիստին քննարկուած են ստեղծուած իրավիճակին մէջ ձեռնարկուելիք քայլերը, այդ կարգին՝ նաեւ ռուսական խաղաղապահ զօրակազմին միջոցով անվտանգ երթելելութեան ապահովումը:

ՄԻՐՉՈՅԵԱՆՆ ՈՒ ԼԱԻՐՈՎԸ ՔՆՆԱՐԿԱԾ ԵՆ ...

Շարունակուած Ա. Էջէն

Արտաքին գործոց նախարարութենէ կը յայտնեն, որ գրուցակիցները անդրադարձ կատարած են 9 Նոյեմբեր 2020-ի եւ 11 յունուար եւ 26 Նոյեմբեր 2021-ի եռակողմանի յայտարարութիւններով ձեռք բերուած պայմանաւորաւծութիւններու կատարման ընթացքին:

Արարատ Միրզոյեանն ու Սերկէյ Լաւրովը քննարկած են նաեւ շրջանին մէջ տիրող անվտանգային իրավիճակը: Հեռաձայնային հաղորդակցութեան

ընթացքին միտքեր փոխանակուած են 44-օրեայ պատերազմին պատճառով յառաջացած մարդկային խնդիրներուն վերաբերեալ: Այս ծիրին մէջ երկուստեք կարելոր նկատուած է հայ ռազմագերիներու ու այլ պահուող անձերու ազատ արձակումը եւ հայրենադարձումը:

Կողմերը անդրադարձած են նաեւ երկուստեք հետաքրքրութիւն ներկայացնող շրջանային ու միջազգային օրակարգի այլ հարցերու:

ՀԱՅԱՍՏԱՆ ՄԱՐԴՈՒ ...

Շարունակուած Ա. Էջէն

Արցախի Խրամորթ եւ Փառուխ գիւղերուն ուղղութեամբ ձեռնարկուած յարձակումին պատճառով քաղաքացիական բնակչութեան իրաւունքներու խախտման, Արցախի սահմանամերձ գիւղերու բնակչութեան նկատմամբ Ազրպէյճանի իրական սպառնալիքներուն, ինչպէս նաեւ 2021-2022 թուականներուն ազրպէյճանական զին-

ազրպէյճանական ակաւի պայթումը, կիները, երեխաները ստիպուած հեռացան գիւղէ: Խրամորթիները յատկապէս տագնապի մատնեց այն, որ ազրպէյճանական կողմը իր դիրքերուն գինուրական սարքերը մօտեցուց: Օրեր անց ռուս խաղաղապահները մնայուն յենակետ տեղակայեցին, որմէ ետք այդ հատուածին մէջ լուրջ միջադէպեր չեղան:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՎԵՐԹԱԿԻՍ ԱՐԱԳԵՍԻ մահուան քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի կիրակի, 7 օգոստոս 2022-ին, Նոր Սիսի Ս. Սարգիս եկեղեցոյ մէջ, յաւարտ Ա. պատարագի:

ԱԶԳԱԿ Հեռ. (01) 258526 - 260115 - 241274
ՊՈՒՐԳ ՀԱՄՈՒՏ

AZTAG TEL.: (01)258526 - 260115 - 241274 - E-mail: info@aztagdaily.com
FAX: (01) 258529 - P.O.BOX: 80860 BOURJ HAMMOUD

ارتاک: هاتف: ۲۵۸۵۲۶ - ۲۶۰۱۱۵ - ۲۴۱۲۷۴
فاکس: ۲۵۸۵۲۹ - (۰۱) پ.ص.ب: ۸۰۸۶۰ بيجر حموود